



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

16320

891.99

π-92

82

<sup>82</sup>  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՅՈՒՂԱԲԵՐ

ՍԵՐՈՐՅԱՆ-ԻՆՃԻԿՅԱՆԻ

Ի՛ 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 Թ.

ԹԻՖԼԻՍ

N 449

82

עצמית סו-בית-ע.

ה'תקנ"ח

ה'תקנ"ח / סוף

891.99

7-92

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# Ք Ե Ն Ո Վ Ա Փ Է Ի

Ի Ք Ս ՈՒ Հ Ի Ո Յ Ն Բ Բ Ի Տ Ա Ն Ի Ո Յ

ՇԱՐԱԳՐԵԱՅ

Հ. ՎՐԹԱՆԷՍ Վ. ՊՈՒՏՈՒՐԵԱՆ

Ի ՄԻԹՍՐԵԱՆ ՈՒԵՏԷՆ

ՆՐՐՈՐԳ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի Ս ՈՒ Բ Բ Ն Ղ Ա Ջ Ա Ր

1872

20 03

37528 ա.հ.

ի հրոց հարապէսի սերովիւտանց

ԳՍՅԻԱՆԷ՛ ՏԻԿԻՆ ԱՄՊԱՐԵԱՆՑ

ՍԻՐԵԼԵԱՅՆ ԻԻՐՈՑ

ՎԱՂԱՄ ԵՌԻԿ ՈՐԳԻՈՑ

ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊՕՂՈՍԻ


ՆՈՒԻՐԷ ԶԱՅՍ ԱՐՁԱՆ

Ի ՅԱԻԼԻԺ ՅԻՇԱՏԱԿ

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Գ Ո Ր Ո Վ Ո Ց

21224 - 60







21224-60

Եկայ աշխարհ բան չի գիտցայ  
 Ինչուան եօթը տարուան եղայ.  
 Կ'անցնէր օրերս երազի պէս,  
 Չէի գիտեր թէ ի՞նչ եմ ես:  
 Տեսածս ամեն էր մոլթ աղօտ,  
 Չի նոր կ'ըլլար ինձ առաւօտ.  
 Սիրտս անհաստատ, սէրս անմիտ էր,  
 Եւ զգայութիւնս էր հոգւոյս տէր:  
 Այլ արևուն երբ լոյս ծագեց,  
 Բացաւ աչքերս, մոլթն հալածեց.  
 Բայց ՚ի մարդոյ վախ չունէի,  
 Ոչ Աստուծոյ սէր գիտէի:







Իրաւ ճանչցայ թէ ես մարդ եմ  
 Այլ մարդկութիւն ինչ է չիյտեմ:  
 Սիրտըս անմեղձ աչքս էր խաղի,  
 Ներս գիս կարծես հուր կը վառի:  
 Բարեկամներս չէի ճանչնար,  
 Իմ կամքս ընողն սիրտըս կ'որսար.  
 Ով որ խըրատ տալ ինձ կ'ուզէր,  
 կարծես սըրով զիս կը զարնէր:  
 Մըլած ծաղկած ծառի նրման,  
 Մարդիկ ինձի երնէկ կուտան.  
 Իմ ծընողացս մէկ հատ զաւակ,  
 Ամեն սփոփանքս ունիմ արձակ:  
 Իսկ երբ եղայ տասը տարուան,  
 Թուշերս կարմիր կեղը նուան,  
 Ամօթն աչքերս ժողվեց իրեն,  
 Այլ պարտըկել զիս դեռ չիյտեմ:  
 Ունայնութեան խելքըս տուած,  
 Կ'ուզեմ քայլել հագուած սըդուած.  
 Հայլին առջևս միշտ կ'առնէի,  
 Եւ ինձ միայն կը հաւնէի:  
 Բայց տակաւին սիրտս էր անմեղ,  
 Գեռ չարութիւն չէր գըտած տեղ.  
 Տարուէ տարի միտքս արթնցաւ,  
 Սուտ աշխարհիս հետ կապուեցաւ:



Մնոջ ձայներ երբ լսէի,  
 Պարել խաղալ կը սկըսէի.  
 Սիրտս աշխարհէս չէր կըշտանար,  
 Մեռնիլ որուն միտքը կ'իյնար:  
 Երբ տասնըջորս տարուան եղայ,  
 Տեսայ իմ սիրտս տակնուվրայ.  
 Չար կըբերուս եղայ գերի,  
 կամքիս ամեն ուզածն ըրի:  
 Բայց խղճմտանք զիս կը տանջէր  
 Թէ իմ գործքերս կարգի մեջ չէր.  
 Վարքս հաւատքիս երբ յարմար չէ,  
 Հարկաւ ամեն ըրածս ծուռ է:  
 Օր մը երբոր մինակ նըստած,  
 Միտքըս կուգար ամեն ըրածս,  
 Ինչո՞ւ կ'ըսեմ ասանկ կ'ապրիմ,  
 Ետքս ինչ կ'ըլլայ թէ որ մեռնիմ:  
 Աս մտածմունք ինձ շատ ազդեց,  
 Ամեն խընտում սրտէս կըտրեց.  
 Ո՛հ ներսի գիս կ'իմանամ ցաւ,  
 Ինչո՞ւ օրերս մեղքով անցաւ:  
 Գիշեր ցորեկ աչքերս կուլայ,  
 Ինկայ առջինս Աստուածածնայ.  
 « Ո՛վ տիրածին կոյս մայր, կ'ըսեմ,  
 Հոգիս մարմինս քեզ կը յանձնեմ:



Հասիր, մայր իմ, ինձ յօգնութիւն,  
 Դու օգնական ես խեղճերուն.  
 Մեղաց աղտերն ինձմէ սրբէ,  
 Եւ զիս քեզի ան որդեգրէ »:

Տեսնեմ հասաւ վերին շնորհք,  
 Որ ալ մարմնոյս չունենամ հոգ.  
 Հոգիէս թանկ չունիմ այլ բան,  
 Աշխարհիս փառքն է ընդունայն:

Մարդրիտ, գոհար, ոսկի, արծաթ,  
 Ինչ որ ունիմ մարմնոյս 'ի զարդ,  
 Աւի ամենն յօժար կամօք,  
 Աղքատներուն տրւի ձեռօք:

Զարդերս թողի մարդարտաշար,  
 Հոգևովս եղայ աղքատ խոնարհ.  
 Հայրս էր իշխան քաղաքաց տէր,  
 Իմ մեծութիւնս լոկ Յիսուս էր:

Բայց ինչ ցաւեր գլխուս եկան,  
 Ի՞նչ նեղութիւնք գէմըս չէլան,  
 Հօրըս մօրըս աչքէն ընկայ,  
 Ամեն տեսնող վըրաս խընտայ:

Ծեծ ալ կերայ ես անխընայ  
 Երբեմն եղայ արիւնլուայ.  
 Բայց Յիսուսիս սիրոյն համար  
 Աչքիս դիմաց բան չերևնար:

Ամէնքն եղան ինձ խրատտու,  
 Չար լեզուներ քան զսուր հատու.  
 Ո՛հ, սըրտիս մէջ բացին վերբեր,  
 Ու վազցուցին արեան դետեր:

Այլ Տէրն անանկ լեզուիս տայր բան  
 Որ պապանձին ամեն բերան.  
 Ով որ կուգար խօսիլ իմ հետ՝  
 Անթապարտ կը դառնար ետ:

Բայց ինչ օգուտ, երբոր տեսայ  
 Թէ ամենուն բերանն ընկայ,  
 Հայրըս մայրըս կը հառաչեն,  
 Գիշեր ցորեկ արցունք թափեն.

Ուստի ձայնըս վար քաշեցի,  
 Նորէն ես զիս զարդարեցի.  
 Նըւիրելով կամքս Յիսուսիս,  
 « Վըշտօք, ըսի, չարչարէ զիս:

Զի չըշմարիտ խաչիդ բարձող  
 Է՛ գլխովին կամքն ուրացող.  
 Ու երբ ինքզինքն անարդ սեպէ,  
 Քոյ սուրբ շնորհաց ցօղ կը վայլէ:

Յօդեա յիս Տէր սուրբ արիւնէդ,  
 Մի բաժներ զիս օրհնեալ կամքէդ.  
 Լըւա՛ մեղքերս, սրբէ զհոգիս,  
 Չըլլամ գերի սուտ աշխարհիս »:

Այսպէս կեցայ քիչ մը ատեն՝  
 Որ ազատիմ բամբաստուելէն,  
 Բայց ծընողացս սիրան անհանգիստ,  
 Ինծմէ գանգատ ունէին խիստ:  
 Տեսնեմ որ մ'ալ մայրս լայով,  
 Բացաւ բերանն հառաչանքով:  
 « Գենովափէ դուստր իմ, ըսաւ,  
 Կ'ուզէս ըլլալ սրբտիս իմ ցաւ:  
 Դու աչքերուս լոյսն ես միակ  
 Կ'ուզէս թողուլ զիս անդաւակ:  
 Գենովափէ, լըսէ ձայնիս,  
 Մի ցաւազներ վըշտերով զիս:  
 Քեզի համար մենք գանձեցինք  
 Ինչք ու պատիւ, ամեն բարիք:  
 Չէս ողորմիր դու մեր վըշտաց  
 Չունիս որդւոյ սիրտ դիւրազգաց:  
 Ուխտիւք ստացանք ըզքեզ, որդեակ,  
 Եւ արարչին տըւինք մենք փառք:  
 Կ'ուզէս 'ի սուդ փոխել անանց,  
 Զուրախութիւն քու ծընողաց:  
 Ի՞նչ է այդ որ միտքըդ դըրիր,  
 Միթէ մեզի չէս ողորմիր:  
 Աստուած ըզքեզ մեզ լոյս ծագեց,  
 Ինչո՞ւ վառած կայծն անցընես:

Ըստեղծողին տուած պարգև  
 Արհամարհել՝ չէ մեղք թեթև.  
 Քեզ որ ստեղծեց այդչափ տեսքով,  
 Մեղք է ծածկել տըխուր քողով:  
 Թէ չես խորհիս դու զմեր օգուտ,  
 Գիտցիր վընաս է այդ հողւոյդ:  
 Չի մեզ ինչ շահ որ զքեզ ծընանք,  
 Թէ որ քեզմով չուրախանանք:  
 Ըստեղծողիդ հաղար փառք տանք,  
 Տըւաւ ըզքեզ մեզի պարծանք:  
 Հասակդ երկայն իբրև շուշան  
 Փայլուն աչքերդ աստղ աննրման:  
 Նարդոս քըրքում վարդ մանուշակ,  
 Քան զամեն խունկ հոտդ անուշակ:  
 Ո՞ր մէկ պարծանքդ ըսեմ գովեմ,  
 Վախնամ կ'ըլլայ Աստուծոյ դէմ:  
 Մինչ աս տարիքդ որ հասուցի,  
 Ո՞հ, ես ինչէր չեքաշեցի:  
 Ծաղկի նրման երբ բացուեցար,  
 Ինչո՞ւ կ'ըսես հարս չեմ ըլլար:  
 Բողոր աշխարհ երնէկ կուտան,  
 Որ լոյս եղար մեր խաւար տան:  
 Ինչո՞ւ նորէն մըթընցընես:  
 Ու մեր սրտերն սըզով լեցնես:


Թէ որ հողիդ փըրկել կ'ուղես,  
 Հարս ըլային ինչ կը վախես.  
 Շատ աղջիկներ քեզի նման,  
 Աշխարհք մըտած արդար եղան:  
 Ո՛վ դըստրիկ իմ հընազանդէ,  
 Յաւագին մօր ձայնին լսէ.  
 Նայէ մահուս պատճառ չըլլաս՝  
 Որ փուճ՝ տեղը վերջը չողբաս »:  
 Ասոր նման ուրիշ խօսքեր,  
 Արտասուլազին ողբով կ'ըսէր.  
 Իր լացերովն սիրտըս ճըմկեց,  
 Աղի արցունք աչքէս վազեց:  
 Քիչ մը ատեն ես լուռ կեցայ,  
 Մօրըս սիրտը ինչուան իջնայ.  
 Ետքը « Մայր իմ, մի լար, ըսի,  
 Ես արտասուլացդ չեմ արժանի:  
 Կ'ըսես Աստուած քեզ տըլաւ մեզ,  
 Ճըշմարիտ է գիտեմ և ես.  
 Բայց դու ինչու այսպէս կ'ողբաս,  
 Ա՛յս փոխարէնն իրեն կուտաս:  
 Զաւակ սիրուն, կ'ըսես, ծընար  
 Աչքերդ փայլուն գերթ ասող պայծառ.  
 Բայց աչքերէս ինչ շահ հոգւոյս,  
 Երբ խաւարի շնորհաց իւր լոյս:

Ունայն է գեղ սուտ աշխարհի,  
 Ծաղկի նման շուտ կը թուովի.  
 Մարդը դըրսանց բան մը կարծես,  
 Գարնան բացուած վարդի մը պէս.  
 Բայց թէ խեղճով լաւ մըտածենք,  
 Ի՞նչ ցաւալի բան կը տեսնենք.  
 Ունայնութիւն են և պատրանք,  
 Որովք խաբէ ըզմեզ աշխարհք:  
 Արիւն քըրտինք իրաւ մըտար  
 Մինչ աս տարիքս որ զիս տեսար.  
 Դու զիս ծընար, այլ Տէր պահեց,  
 Եւ սըրտիս մէջ զիւր սէր վառեց:  
 Մարդիկ քեզի տան երանի,  
 Ի՞նչ կը հաւտաս ամեն բանի.  
 Ամենուս տէր Աստուած ինքն է,  
 Մարդկանց գովեստ բոլոր սուտ է:  
 Մենք մեր ծնողաց պարտական ենք,  
 Պէտք է որ միշտ զիրենք պատուենք.  
 Այլ Տէր միայն կոչեմք զԱստուած,  
 Մնոր ձեռացն եմք արարած:  
 Թէ և ծընողք զիս ծըներ են,  
 Հողիս մարմինս Յիսուսի են.  
 Ուստի պէտք չէ թողում զՅիսուս,  
 Ծնողաց վըայ դընեմ իմ յոյս »:

Աս խօսքերըս ըսած ատենս,  
 Կարծես կայծեր թռչէր բերնէս,  
 Մօրըս աղէք խանձոտեցան,  
 Այլ իմ վերքերս նորոգուեցան:  
 Սիրտըս եղաւ տակնուվրայ,  
 Աչքէս արցունք գետօրէն գայ.  
 Թողուց իմ մայրս ելաւ գընաց,  
 Ա՛հ, իմ սիրտս ալ հետը գընաց:  
 Մէկէն հայրըս վերայ հասաւ  
 Ողբով լալով իմ ոտքս ընկաւ.  
 Շատ ջանք ըրի որ հանեմ վեր,  
 Բայց նա խօսքիս մըտիկ չընէր:  
 « Գենովափէ, ս'վ զաւակ իմ,  
 Զարկ զիս, ըսաւ, որ հոս մեռնիմ.  
 Առաջ ձեռքովդ զիս հողը դիր,  
 Վերջը գընա դու վանք մըտիր »:  
 Ան ատենը լաւ իմացայ,  
 Որ յԱստուծոյ չիկոչուեցայ.  
 Վերուցի միտքս ըստեղծողիս,  
 Իւր սուրբ կամացն յանձնեցի զիս,  
 « Հայր իմ, ըսի, հընազանդ եմ,  
 Ես ձեր կամաց չեմ կենար դէմ.  
 Աստուծոյ կամքն ըլլայ օրհնեալ,  
 Բարեցոյս ես դէմ կընամ դառնալ »:

Երբոր այս խօսք բերնէս լըսեց,  
 Ի՞նչ ցընծութեամբ զիս համբուրեց.  
 Մէկէն մոռցաւ իր ամեն ցաւ,  
 Սիրտն ալէկոծ ծով մը դարձաւ:  
 Բայց ետքն յանկարծ սև տըրտում թիւն,  
 Պատեց երեմն ու մահու գոյն.  
 Գըլորեցաւ ինկաւ գետին,  
 Եւ թալկացաւ գոյն երեսին:  
 Ի՞նչ տեսարան աչքիս զարկաւ,  
 « Աստուած, ըսի, աս ի՞նչ եղաւ.  
 Ո՛հ ես իմ հայրս զարկի ցաւօք  
 Ես մեռուցի, վախ, իմ ձեռօք »:  
 Նայիմ չորս գէս մարդ մը չիկայ,  
 Որ գոնէ գայ պուտ մը ջուր տայ.  
 Բոլոր յոյսըս մարդէ կըտրած,  
 Կ'աղաչէի առ տէր Աստուած:  
 Զիյտեմ ի՞նչպէս դիմացաւ սիրտս,  
 Ես զարմանամ իմ ըրածիս.  
 Ան տարիքը աղջիկ տըղայ,  
 Ի՞նչպէս առի գիրկըս նըստայ:  
 Լացիս ձայնէն բացաւ աչքեր,  
 Երեսս 'ի վեր կը ծիծաղէր.  
 « Դուտոր իմ, կ'ըսէր, չըլլայ վախնաս,  
 Բան չեմ եղած խելքս է վըրաս »:

Ծառայքն ամեն ներս վաղեցին  
 Ամեն դարման ընենք ըսին,  
 Բայց նա մէկէն ելաւ ոտքի,  
 « Բան մ'ալ, կ'ըսէր, պէտք չէ ինձի:  
 Իմ սիրեցեալ Գեհուվափէ,  
 Զի զերծուցիր յամեն ցաւէ.  
 Թող ամեն տեղ գըրուին թըղթեր,  
 Թող գան ժողվին ազգականներ.  
 Զի այս օրըս մեծ է ինձի,  
 Քան զամեն օրս որ անցուցի.  
 Ըստեղծողն տամ հազար փառք,  
 Որպէս թէ նոր եկայ աշխարհք:  
 Այսուհետեւ չըսեմ բընաւ,  
 Թէ մայրըս զիս անբաղդ ծընաւ.  
 Ասկից եւեւ չըլլար մեծ բաղդ,  
 Զի զաւակս է ինձ հընազանդ »:



Բ.

Թող ամեն մարդ սորվի ինձմէ,  
 Ինքիր գլխուն խոստմունք չընէ.  
 Զի երբ խօսքէդ ետ կը դառնաս,  
 Կեանքդ ցաւերով կ'անցնի 'ի ւաց:  
 Ապիրիտին Պալատինեան,  
 Ինձի պատրաստ փեսայ գըտան.  
 Իշխան էր նա արքայազարմ,  
 Ամեն ձիրքով ձօխ ու փարթամ:  
 Կոմեր, դուքսեր ու իշխաններ  
 Մեր հրձուանաց եղան ընկեր.  
 Ի'նչ մեծ հանդէս էր որ եղաւ,  
 Բոլոր քաղաքն 'ի թունդ ելաւ:  
 Ամբողջ ամիս մ'ըրին հարսնիք,  
 Զէր տեանուած այնպէս հարկինք.  
 Աղքատ տընանկ ու խեղճ մարդիկ,  
 Ի'նչ օրհնենքներ ինձ կարդացիք:

Անինչ աղջիկք որչափ կային,  
 Բերին ամենքն հոն ժողվեցին.  
 Հայրքս եղաւ ամենուն տէր,  
 Աւնող տրղոցն ապրուստ կապէր,  
 Երկու հարիւր հարս զարդարուած,  
 Իրենց փեսին ձեռքէն բռնած,  
 Եկեղեցին եկանք մշտանք,  
 Ամենքս մէկ օր պրսակուեցանք:  
 Թէ հոգեւոր Թէ մարմնաւոր,  
 Ամեն հանդէսն էր փառաւոր.  
 Ամենուն սիրտ պատեց խնտում,  
 Հրձուանք բերկրանքն էր անպատում:  
 Բայց իմ սրբտիս հուրն անտոջոր,  
 Կ'այրէր մըրկէր զանձն իմ բոլոր.  
 Զի խղձմտանքս զիս կը տանջէր,  
 Թէ ինձ ուխտէս դառնալ պէտք չէր:  
 Այլ երբ զայս լուծ առի կամաւ,  
 Պէտք է կըրեմ յօժար՝ անցաւ.  
 Ըստ Աստուծոյ պատուիրանին,  
 Սէր կապեցի իմ փեսային:  
 Քանի որ ես էի մինակ,  
 Սիրոյս Աստուած էր նըպատակ.  
 Յետ Աստուծոյ սէր ծընողաց,  
 Ինչպէս օրէնքն են պատուիրած:

Հիմայ ունիմ ես ուրիշ պարտք՝  
 Սիրել զփեսայն իմ խանդակաթ.  
 Զի երկուքնիս մի եմք մարմին,  
 Ինչպէս երգմամբ որ յանձն առինք:  
 Յիսուս, հազար փառք տամ բեզի,  
 Որ ինձ տըւիր ընկեր բարի.  
 Քո սուրբ անուանդ փառաց նախանձ,  
 Իւր սրբտին մէջ միշտ է վառուած:  
 Այլ ինչ ըսեմ ես իմ բաղդին,  
 Որ իմ ծընողքս չի խընտացին.  
 Դեռ նոր բացուած էի ծաղիկ,  
 Զանոնք մահուն տարաւ ժանկը:  
 Ո՛հ, ինչ յոյսեր վըաս ունէին,  
 Ի՞նչպէս բընաւն դնաց հետերնին.  
 Իմ ցաւերս ալ նորոգուեցան,  
 Վըշտաց եղայ ընդունարան:  
 Ես իմ փափաքս մէկդի դըրի,  
 Որ ծընողաց կամք կատարուի.  
 Այլ բրածէս ինձ ինչ օգուտ,  
 Երբօր ցաւոց պատեց զիս մութ:  
 Սպիրիտինն իմ սիրելիս,  
 Թէպէտ յաջորդ նստաւ ծնողիս,  
 Այլ աւանդ մեզ և զուր վաստակ,  
 Զի մընացինք մենք անզաւակ:

Օր-12212  
 1008  
 3012

Չի թէ ժառանգ չունեցանք մենք  
 Ար մեր պարծանքն իրեն ձրգենք,  
 Ինչո՞ւ ծընողքս այնչափ լացին,  
 Ինչո՞ւ աշխարհ զիս մրտցուցին:  
 Ի՞նչ նախատինք չէի լսեր,  
 Ար կուսութիւն կ'ուզեմ ընտրել.  
 Ժառանգ չունինք ըսին լացին,  
 Իմ Յիսուսէս զիս բաժնեցին:  
 Ամէնք զաւկի կը փափաքին,  
 Ար սուրբ վախճանն է պըսակին,  
 Ինձ ի՞նչ օգուտ՝ աշխարհ մրտայ,  
 Երբոր Աստուած զաւակ չըտայ:  
 Նաճապետաց մէկ օրհնենքն ալ,  
 Զաւկըներով էր բաղմանալ.  
 Ես զըրկեցայ աս օրհնենքէս,  
 Ինչո՞ւ դարձայ իմ խոստմունքէս:  
 Այլ ես ի՞նչպէս դանգատ կընեմ,  
 Երբ իմ չարեաց պատճառ ես եմ.  
 Ի՛նչպէս չողբամ մեղքիս վրայ.  
 Ամեն յոյսէս ես զըրկեցայ:  
 Իրաւ ընկերս կը սիրէ զիս,  
 Քաղցր խօսքերն ոյժ են սըրտիս,  
 Այլ ամբլութիւնս պատիժ մեղքիս,  
 Ծանակ ըրաւ ամենուն զիս:

Բոլոր աշխարհ թող ինձ վայ տայ,  
 Ար աս անէծքն իմ վրաս կայ.  
 Ո՛վ որ տուած խօսքէն դառնայ,  
 Պատիժն իրմէն պակաս չըլլայ:  
 Կենդանիներ և թըռչուններ,  
 Ամէնքն ունին իրենց ձագեր.  
 Սիրեն սիրուին ճուուողելով,  
 Զի՞նչ քաղցրագոյն քան մարց գորով:  
 Լալով մարդուս սիրտը բացուի,  
 Ես որչափ լամ այնքան փակուի.  
 Աչուըներէս հեղեղաբար  
 Գետք արտասուաց դան անդադար:  
 Ո՛ւր որ երթամ ո՛ւր որ նստիմ,  
 Այս կըրակով միշտ խանձոտիմ:  
 Գիշեր տանջում երազներով,  
 Յերեկ ծըփի միտքս իբրու ծով:  
 Գարնանային անոյշ հողմեր,  
 Չեն բժըշկեր սրտիս վէրքեր.  
 Խոխոջալով վազեն ջրերը,  
 Աւաղ ինձի, զի չեմ լսեր:  
 Երբ թըռչուններ քաղցր երգեն,  
 Իմ սիրտս աղիքս կը կըտրատեն.  
 Նոքա կանչեն իրենց ձագեր,  
 Ա՛հ, ես անզոյգ լըր եմ դարձեր:



Գոյն գոյն փայլին տեսօք ծաղկներ ,  
Այլ չեմ առնուր ես քաղցր հոտեր :

Ո՛հ , արևուն ճառագայթներ ,  
Ինչո՞ւ սրբտիս մէջ չեն ծագեր :

Երբ շողջողէ լոյս լուսնակին՝  
Յուան ծրփին ալիք ծովին ,  
Սմեն տեսնող ցընծայ բերկրի ,  
Ես եմ միայն աւաղելի :

Մնցնի ձրմեռ , ծաղկի գարուն ,  
Իմ չի հալիւր սրտիս արիւն .

Յետ ամառան կուգայ աշուն ,  
Մարդ կըզմայլի պըտուղներուն :

Ես անպտուղ դարձայ չոր ծառ ,  
Փոխան պտղոյ մեղքերս փուշ չար .  
Երբ զիս հընձէ մահուն դանակ ,  
Ո՛ր կը մընայ զարմիս պարծանք :

Ա՛հ , բերնիս մէջ չորցաւ լեզուս ,  
Խաւարեցաւ աչքերուս լոյս .  
Ա՛լ ես չունիմ տեղէ մը յոյս ,  
Մեռնիմ ցաւօքս , տէր իմ Յիսուս » :

Ասանկ խօսքեր ըսած ատենս ,  
Բոլոր մնարմինս կ'երէր ներսէս .  
Եւ հըրբաբուղիս լեբան մը պէս ,  
Ծուխ ու կրակ կ'ելէր սըրտէս :

Մէյմ՝ ալ յանկարծ ժողվեցի զիս ,  
Եւ զարմացայ ես իմ խօսքիս .

« Վայ ինձ , ըսի , ի՞նչ եղայ ես ,  
Աս ի՞նչ խօսքեր կ'ելեն բերնէս :

Երբ պատիժ է քաշածս գիտեմ ,  
Պէտք է զըղջամ , մեղայ գոչեմ .  
Ինչո՞ւ բերնիս եկածն ըսեմ ,  
Եւ նորէն Տէրս զայրացընեմ :

Ո՛հ , քանի մէկ ես կոյր մընամ ,  
Մեղքիս վրայ նոր մեղք բառնամ .

Երբ Աստուծոյ կամքն է գիտեմ ,  
Որո՞ն՝ ուսկից գանգատ կ'ընեմ :

Միթէ իմ Տէրս չէ՞ ողորմած ,  
Ե՞րբ նեղելոց նա չէ լըսած .

Երկնից սիրոյն է արժանի  
Որ իւր մեղաց վըրայ ցաւի :

Չէ՞ յիրաւի , չունիմ զըղջում ,  
Երբոր իմ կամք ես չըթողում .

Թէ ստուգիւ մեղքերս ճանչցայ ,  
Քաշած ցաւերս քիչ կ'երևնայ :

Ուստի տուր Տէր պատիժ մեղացս ,  
Սուրբ բարկութիւնդ հեղ իմ վրաս .

Ո՛րչափ կամքդ է՝ զիս հոս պատժէ ,  
Չըլլայ մեղքերս քեզմէ զատէ » :

Երբ այս խօսքերս սրբոէս կ'անցնէր,  
 Իմ սև ցաւերս կը փարատէր,  
 Ու աչքերէս աղբիւրի պէս  
 Վազէց արցունք սիրտս հովահրեց:



Գ.

Աչքէս արցունք դեռ չէր դադրած  
 Մինչ թմրութիւն մ'եկաւ վըրաս.  
 Կը տեսնէի դէմքս կեցած  
 Ստուածածինն զՅիսուս գրկած:  
 Փայլէր չորս դին ճառագայթներ,  
 Լուսէն աչքերս կը մթագնէր.  
 « Գեհովաիէ, ըսաւ ինձի,  
 Ինչո՞ւ այդպէս ըստ տրտմանի:  
 Յաւերդ չըլլայ վըշտաց առիթ,  
 Խաչով միայն փրկիի հողիդ.  
 Տեառն Յիսուսի սիրոյն նըշան  
 Եղած է միշտ խաչին ճամբան »:  
 « Ո՛վ տիրածին Մայր իմ, ըսի,  
 Հողիս քեզմով միայն փրկիի.  
 Օգնէ ինձի՛ փրկիէ հողիս,  
 Յաղտից մեղաց սրբէէ դու զիս:

Կարծես քիչ էր առջև մեղքերս,  
 Աւելցուցի նոր նոր վէրքեր.  
 Ո՛հ վայ ինձի, զիս կորուսի,  
 Ընդդէմ Փրկչիս գանգատ ըրի:  
 Մեղայ գոչեմ, ո՛վ Տիրամայր,  
 Երնորհք խնդրէ ինձի համար.  
 Եւ միածին յորդույդ գթած,  
 Ներում հայցէ վասն իմ մեղաց:  
 Մեղայ, Տէր իմ, ՚ի գուժ դարձիր,  
 Քու սուրբ արեամբդ զիս գնեցիր.  
 Չարչարանօք քո ըստացար,  
 Յիշէ՛ վասն իմ ՚ի խաչ ելար»:

Տեսնեմ Յիսուս ծիծաղերես,  
 Չեւքն երկընցուց շոյեց երեսս.  
 Սիրտս լեցուեցաւ երկնից սիրով,  
 Երկրի սուտ սէրն ի՛նչ անոր քով:  
 Նորէն ձեռքը դրբաւ գլխոյս,  
 Սըրբեց յինէն զաղտերն հոգւոյս.  
 « Մեղքերդ, ըսաւ, ես քաւեցի  
 Քու խնդիրքներդ թող կատարուի»:

Մայրն Աստուծոյ սուրբ կոյս Մարիամ,  
 Կրկնեց այս խօսքս երեք անգամ.  
 « Կը կատարէ Յիսուս բաղձանքդ,  
 Այլ միշտ խաչով անցնի քու կեանքդ»:

Այս խօսքն իրաւ սուրի նըման՝  
 Դառն խոցեց զսիրտս համայն,  
 Այլ խնդուժեամբ էի լըցուած  
 Եւ կ'օրհնէի ըզտերն Աստուած:  
 Մէյմ'ալ յանկարծ բացի աչքերս,  
 Կարծես զարթնում խորունկ քընէս.  
 Տեսնեմ լեզուս դեռ չէր դադրեր,  
 Եւ աչքերէս արցունք քամուէր:  
 Այլ միտքս այնպէս էր զգածուած,  
 Որ չեմ գիտեր ի՛նչ է ըսած:  
 Հազիւ կըրցայ ես զիս ժողվել՝  
 Տեսած տեսիլքս միտքս բերել:  
 Մէկէն գնացի եկեղեցին,  
 Բազկատարած ինկայ դետին.  
 Կ'ըսեմ, « Ո՛վ մայր կոյս Տիրածին,  
 Դու ես յոյս իմ բողբոլին»:

Ո՛հ քաղցր էր ինձ քեզ միշտ սիրել,  
 Այլ արդէլին զիս իմ մեղքեր.  
 Երբ սըրբեցաւ մեղքերուս աղտ,  
 Այսուհետեւ սիրեմ ազատ:  
 Ի՛նչպէս ըլլամ շնորհակալ,  
 Որ կ'ամընամ դէմըդ կենալ.  
 Այլ զի կոչիս դու մայր գըթած,  
 Ողորմութեան դուռդ է միշտ բաց:

Երբ մտածեմ պարզեղ անդին  
 Որ պարզեց սէր քոյ սրտին՝  
 Ուրախութեամբ սիրտ իմ ցընծայ,  
 Չի ըզՓըրկիչ իմ էս տեսայ:

Ա՛հ, որպիսի մեծ դուժ ունիս,  
 Ի՞նչպէս սիրով լըսես ձայնիս.  
 Մեղաւորին դարձ զգըում տաս,  
 Եւ քու շնորհք չառնես պակաս:

Քանի քանի փորձանքներէ,  
 Չիս փըրկեցիր յամեն չարէ.  
 Քու խընամոց չեմ արժանի,  
 Բայց սէրդ անչափ է մայրենի:

Ես ապերախտ եմ և անարգ,  
 Որ չըձանցցայ շնորհացդ յարգ.  
 Բայց դու ձանցցուր, ո՛վ տիրուհի,  
 Չըլլայ հոգիս իմ կորսըլի »:

Ասոր նման ուրիշ խօսքեր,  
 Անհատաբար սըրտէս բղխէր,  
 Ի՞նչ խնտում էր որ ըզգացի,  
 Ազդողն միայն դիտէ բարի:

Ուրախութեամբ ելայ ժամէն,  
 Չէի դադրեր միշտ փառք տալէն:  
 Անցան օրերս ուրախ զըւարթ  
 Չըսի մէկուն չըզիտցաւ մարդ:

Սպիրիտին տեսնելով զիս  
 Որ էս ուրախ եմ իմ գործիս,  
 Չարմանալով կը հարցընէր,  
 Ուրախութեանս պատճառն ի՞նչ էր:

« Տէր իմ, ըսի, ի՞նչ կը փորձես,  
 Ուրախութիւնս մի՞թէ չուզէս.  
 Երբ Աստուծոյ յանձնեցի զիս,  
 Ուրախութեամբ լեցուեցաւ սիրտս »:

Երբոր այս խօսքս լըսեց բերնէս,  
 « Սէր իմ, ըսաւ, խնդրեմ՝ ներես.  
 Ի՞նչպէս չուզեմ ուրախ ըլլալդ,  
 Երբ ցաւ է ինձ անընդհատ լացդ »:

« Այտուհեաւ, ըսի, չիլամ,  
 Յոյսըս բոլոր Աստուծոյ տամ.  
 Եւ դու բնաւ մի ճշգոհար՝  
 Ինչու Աստուած ժառանգ չիտար »:

Դ.

Բայց տես յանկարծ ինչեր կ'ըլլայ,  
 Երկրիս վրայ անշարժ բան կայ.  
 Շատ օր չանցաւ հասան թրղթեր  
 Թէ մօտ տեղուանք զարկին Թուրքեր:

Մէկէն խորհուրդ ըրին ծերեր,  
 Որ գան ժողվին զօրապետներ.  
 Ամեն մէկը իր զօրքէն զատ  
 Զինուոր գրեն հարկէ ազատ:

Որովհետեւ թըշնամինիս  
 Խախտել կ'ուզէ սուրբ հաւատքնիս,  
 Պէտք է ազգով մենք դէմ ելլենք՝  
 Արիւննիս ալ չխնայենք:

Հարիւր քսան մեծ ցուկանաւ,  
 Մէկէն նոյն օր զարդարուեցաւ.  
 Բոլորովին կազմ և պատրաստ,  
 Թի՛քաշողներ փորձ և զգաստ:

Որչուեցաւ օրն ելլելու,  
 Ամենքն եկան հոն ժողվելու.  
 Մտան նաւու նաւապետներ,  
 Բացին իրենց գոյն գոյն դրօշներ:

Գնդապետներ կեցան ցամաք,  
 Ուր էր զօրաց մեծ հրապարակ.  
 Հարիւր քրսան զօրավարի  
 Վաթսուն հազար զօրք կը գրուի:

Հինգ հինգ հարիւր հողի մէկ գունդ,  
 Ամեն գնդի տարբեր հագուստ.  
 Հազած զըրահ և սաղաւարտ,  
 Զէնքերն փայլին ոսկի արծաթ:

Սպիրիտին հագաւ վերան  
 Իւր քաջ նախնեաց զէնքերն լուման.  
 Երբոր ելաւ զօրքին դիմաց,  
 Երկինք գետին կարծես թընդաց:

« Կեցցէ՛ իշխան Պալատինեան,  
 Կեցցէ՛ գոչէն միաբերան.  
 Դու ես, կ'ըսեն, հայր մեր և տէր,  
 Քեզ կեանքերնիս ըլլայ նրւէր »:

Հոն նաւերէն՝ հօս բերդերէն,  
 Թնդանօթներ օդը հընչեն.  
 Փող և թըմբուկ նըւադարանք,  
 Պատերազմի զարնէն նըւազ:

Այն անհամար բազմութեան ճայն՝  
 Որ կը կանչեն միաբերան,  
 Կարծես փրփրած ալիք ծովին  
 Ժայռերուն հետ կը ծեծկրկին:  
 Բոլոր գեղերն մարդ չիմնաց,  
 Ամենքն եկեր հոն են ժողված.  
 Հնարք չըկայ ճամբայ գտնել,  
 Եւ բազմութիւնն ճղքել անյնել:  
 Եկեղեցւոյ պաշտօնեաներ,  
 Կերոն բռնած թափօր ելեր.  
 Աւետարան խաչ առջևէն,  
 Կարգաւ կ'երթան սաղմոս կ'երգեն:  
 Հայրապետներ զգեստնին հագած,  
 Խաչ գաւազան ձեռքեր բռնած.  
 Սուրբ սպասուց նաղչն ոսկեթել,  
 Զերթ մարգարիտ փայլին զարդեր:  
 Կանոնիկոսք և քահանայք,  
 Ուխտի մանկունք և սարկաւազք.  
 Ամենքն ոսկի դիպակ հագած,  
 Սըրբոց պատկերք տանին գըրկած:  
 Եւ միանձունք կըրծնաւորք,  
 Երկնակենցաղ սուրբ ճգնաւորք,  
 Մարուր փիլոնն առած վըրան,  
 Այս հանդիսի մեծ զարդ եղան:

Դպրոցները սորվող տղաք,  
 Ամենքն հագուած կարմիր ճերմակ,  
 Հրեշտակային իրենց ճայներ,  
 Բոլոր աշխարհ զարմացրնէր:  
 Երիտասարդք, կոյսք սըրբանուէր  
 Սըբ և կանայք մանուկ և ծեր  
 Աւ հասարակ բերաննին երգ,  
 ձիւղք ձիթենեաց ամենուն ձեռք:  
 Այս հանդեսով մինչև 'ի լոյս,  
 Պըտըտեցան պարըսպէն դուրս.  
 Լոյսն որ ծագեց մըտան քաղաք,  
 Ժողովեցան 'ի հրասարակ:  
 Հոն առաջուց էր պատրաստած,  
 Պատարագի ամեն ըսպաս.  
 Մեծ հանդիսով պատարագեց,  
 Քաղքին առջի աւազերեց.  
 Ամենք գետնի վրայ ընկած,  
 Հեծեն ճայնիւ հառաչանաց,  
 Սպիրիտինն առաջ անցաւ,  
 Իշխաններովն հաղորդուեցաւ:  
 Վերջը կարգաւ ամենքն եկան,  
 Մինչ 'ի կէս օր հաղորդեցան,  
 Բոլորն հարիւր հազար հօգի,  
 Որոնք որ ծով մանեն պիտի:

Յետ հոգևոր սուրբ կերակրոյն  
 Հարկինք եղաւ հոն զօրքերուն.  
 Ազնիւ փափուկ կերակուրներ,  
 Այն մեծ կոչունքն կը զարդարէր:  
 Սպիրիտին սեղանէն վերջ,  
 Իշխանները քովը կանչեց.  
 Գողոն անուն ըզմեծ իշխանն,  
 Վերակացու դըրաւ իր տան:  
 Անկէ ետքը զօրքը ժողովեց,  
 Ռոճիկներն առատ բաժնեց.  
 Մըտան ժամը օրհնուեցան,  
 Ետքը ծովեզրն հաւաքուեցան:  
 Սպիրիտին տըլաւ նըշան,  
 Յոկանաւերն արձրկուեցան.  
 Կապոյտ ճերմակ առաջաստներ  
 Կայմերուն ծայրն կը ծածանէր:  
 Ա՛հ, երբ հընչէր բաժանման փող,  
 Արդեօք մընաց մարդ չըլացող,  
 Ի՞նչ սրտաշարժ էր տեսարանն,  
 Ի՞նչ արցունքներ յերկիր հեղան:  
 Զի այնպէս խեղճ չալեն երգեն,  
 Որ քարերն ալ ՚ի լաց շարժեն.  
 Մայր, քոյր, եղբայր, սիրականներ,  
 Ամենք ցաւօք կը բաժնուէր:

Գառներու պէս որ կ'որոշեն  
 Զագեր մայրեր զատ քայքայեն,  
 Վայ խեղճ՝ մայրեր այնչափ մայեն,  
 Մինչև շատը կուրնայ լալեն:  
 Արևն ՚ի մուտս երբ խոնարհէր  
 Հոյն ուժովնալ էր բսկըսեր.  
 Թնդանօթներ ներսէն դըրսէն,  
 Օղն անդադար հընչեցընեն:  
 Ծածկըւեցան նաւերն մուխէն,  
 Մութը պատեց՝ ուշ էր ատենն.  
 Ճամբուողներն կ'երթան առաջ,  
 Վայ ճամբողին՝ չիդադրիր լաց:  
 Ո՛րը լացով որը ողբով  
 Գարձան տեղերն մութ գիշերով.  
 Ես ալ դարձայ մրտայ ՚ի տուն,  
 Բայց մերժեցաւ աչքերէս քուն:

Ե.

Մարդուս գլխուն բան մը չեկած,  
 Ի՞նչ աղէկ էր լըսած սորվածն.  
 Այլ անօդուտ, որչափ սորվի  
 Դեռ անկատար մարդ կը սեպուի:  
 Ո՛հ յիրաւի դըժուար է մահ  
 Որ զսիրելիս սև հողուն տայ.  
 Այլ քան ըզմահ դառն էր այս ցաւ  
 Քունն աչքերէս ներս չըմրտաւ:  
 Երբոր տեսայ մարդ չիմընաց,  
 Կը քընանան յոգնած դադրած,  
 Գացի մէկէն մատուռ մըտայ,  
 Հաւաչանօք գետինն ընկայ:  
 «Մայր իմ, ըսի, ո՛վ Տիրամայր,  
 Մի մանկուծեան մեղքս երես տար.  
 Պահէ զընկերս 'ի փորձանաց,  
 Վասն Յիսուսիս անհուն արդեանց:

Թող չիպարծին անհաւատներ,  
 Զմեզ կարծելով խեղճ՝ ու անտէր.  
 ԶԱստուած ճանչնան ամենազօր,  
 Ըզտէրն Յիսուս փրկիչ հըզօր:  
 Միշտ բարեխօս ըզքեզ ունիմք,  
 Քու գըթուծեանդ ապաւինիմք.  
 Սուրբ կուսուծեանդ մաքուր կընիք,  
 Զարկ սրտերնուս որ սըբըրւինք»:  
 Այս խօսքերով գիշերն 'ի բուն,  
 Աչքերս արցունք լացի արթուն.  
 Առաւօտեան լոյսը հասաւ  
 Զէր փարատեր իմ սըրտիս ցաւ:  
 Նայիմ չորս դիս դեռ մարդ չիկայ  
 Կամաց մ'եկայ խուցըս մըտայ...  
 Խեղճ՝ ու անձար եմ մընացած,  
 Օգնեա սուրբ կոյս, մայր իմ գըթած...  
 Լոյսն որ ծագեց Գողճնն եկաւ,  
 Շատ իշխաններ հետը բերաւ.  
 Բըռնեց ձեռքըս կ'ուզէր պագնել,  
 Տարով պատիւ ինչպէս հարկ էր:  
 Բայց չեմ գիտեր ի՞նչ պատճառաւ,  
 Միրտս անոր հետ չիկապուեցաւ.  
 Զի միշտ երբոր զինք տեսնէի,  
 Ինձ թըշնամի համարէի:



Իր խօսքերուն չէի հաւնէր,  
Կ'իմանայի միտքն էր աւեր.  
Միշտ ծուռ աչքով վերաս նայէր,  
Աւինչ յիշեմ իւր լիբբ խօսքեր:  
Գող ըլլալ յայտնի ցըցուց,  
Բողորովին ամօթն վերցուց.  
Պարկեշտութիւնս դողնալ ուզեց,  
Առջևս դըրաւ սարգեւներ մեծ:  
Իր չար կամքին շատ դէմ կեցայ,  
Զիս յանձնեցի Ստոուածածնայ.  
Ճար չիզբտայ քաղքէն ելայ,  
Հեռու տեղուանք բընակեցայ:  
Բայց անամօթն և աներես,  
Ո՛ւր որ երթամ դայր ետեւս.  
Կարծէր միտքը չեմ իմացած,  
Գըրով յայտնեց ամեն բան բաց:  
Յիսուս փրկիչ, Յիսուս տէր իմ,  
Սոր ձեռքէն ես ո՛ր փախչիմ...  
Բերդի մը մէջ գացի նըստայ,  
Զըլլայ, ըսի, քովըս մարդ գայ:  
Ս, յլ նորանոր հանձարեց բան,  
Ու պէտք եղաւ տեղըս դառնամ.  
Մէկ գիշեր մը մրտան 'ի բերդ,  
Սչքովս տեսայ ինքն ալ էր հետ:



Ուզեմ չուզեմ թողի փախայ,  
Վախցայ գըլխուս փորձանք մը գայ:  
Անըզգամի ձեռք մնանեցայ,  
Աստուած ինքնին ինծի ոյժ տայ:  
Բայց իմ սիրտըս չէր հանդարտեր  
Տակնուվըրայ միշտ կը ծըփէր.  
Եօթն ամիս էր ընկերս գընաց,  
Ինչո՞ւ, կ'ըսեմ, գիր չեմ առած:  
Չէի կարծեր որ կը ծածկէր  
Իմ փեսայէս եկած գըրեր.  
Օր մ'ալ տեսնեմ եկաւ յանկարծ,  
Չեռքը թուղթ մը սևով կնքած:  
«Նաւ մը, ըսաւ, հիմա հասաւ,  
Քեզ, տիրուհի, զայս թուղթ բերաւ.  
Ասկից 'ի զատ գիր չէ եկած,  
Խընդրեմ տեսնե՞ք ի՞նչ է գըրած »:  
Երբ սև կընիքն աչքիս դըպաւ,  
Ո՛հ իմ սըրտէս արիւն անցաւ.  
Ահուգողով բացի կարդամ,  
Աւաղ ինծի ի՞նչ իմանամ:  
Զօրապետներ կը գըրէին,  
Թէ մեծ իշխան մեր սիրելին,  
Ի մէջ նաւին մեռաւ յանկարծ,  
Զօրքն է սըգով ալեկոծած:

« Որք մնացինք, կ'ըսեն, անտէր  
 Սնչուշտ այսպէս մեզ չէք ձրգեր.  
 Աւանց գրլսոյ չի քալեր ոտք,  
 Չըլայ թողուք անտէր անոք:  
 Պէտք է շուտով գրլուխ ընտրէք,  
 Որ չխմատնիմք թըընամեաց ձեռք.  
 Բոլոր զօրքը կ'աղաղակէ,  
 Գողոն իշխանն թող մեզ իշխէ:  
 Դարձեալ և զայս կը յայտնենք ձեզ,  
 Սպիրիտինս մեզի յանձնեց՝  
 Գողոնն ըլլայ, ըսաւ, ժառանգ,  
 Իրեն թողում իմ գլխոյ թագ:  
 Այս է եղեր Ստուծոյ կամք,  
 Երկինք ձեզի տան երկար կեանք.  
 Խնդրենք շուտով իմացընէք  
 Զօրք, զօրապետք ձեզ կը սպասենք »:  
 Դեռ գիրն ամբողջ չիկարդացած,  
 Աչքերս մթնեց սիրտս դողաց.  
 Կարծես մէկը գլխուս զարկաւ,  
 Լեզուս բերնիս մէջ համրացաւ:  
 Բերենքսիվար ընկայ գետին,  
 Մահուան քրտինք ճակտէս թափին.  
 Մեռաւ, ըսին, քովի մարդիկ,  
 Թողուն երթան մէկիկ մէկիկ,

Տէր չունեցողն այսպէս կ'ըլլայ,  
 Միշտ իր երեսն պատին մընայ.  
 Չուզէր մէկը վերան նայիլ,  
 Օր մը առաջ կ'ըսեն մեռիք:  
 Մեռած ատենդ քովդը կուգան,  
 Թէ որ ունիս տէր սիրական.  
 Մեռնելէդ վերջ թէ գան թաղէն,  
 Այն ալ տիրոջդ պատիւ պահեն:  
 Ապա թէ ոչ մարդկային սէր  
 Խաբեբայ է ով չիգիտեր.  
 Քեզ սիրողներ աշխարհիս մէջ  
 Չուզէն տեսնել մեռնելէդ վերջ:  
 Թէ մեռելիդ վերայ կուլան  
 Իրենց շահուն համար է այն.  
 Ոչ թէ քեզմէ բաժնըւեցան,  
 Այլ զի երենք զըրկըւեցան:  
 Մէկն ալ երբ քեզ մեռած տեսնայ,  
 Իւր մեռնիլը միտքը կ'իյնայ.  
 Ուստի սիրտը վերաւորած,  
 Իրեն համար է ողըն ու լաց:  
 Պէտք չէ վըկայ այս խօսքերուս,  
 Բան չիմընաց չեկաւ գլխուս.  
 Ճմարիտ սէր բարեկամի,  
 Աշխարհիս մէջ քիչ գըտնուի:

Եթէ ըսեմ որ սէր չիկայ,  
 Վախնամ վըրաս շատ մարդ խընտայ:  
 Բայց խնտացողն թող լաւ գիտնայ,  
 Թէ ես անվարձ սէր չիգըտայ:

Չիտեմ այնպէս որչափ ատեն,  
 Մեռելի պէս մընացեր եմ.

Մէյ մ'ալ երբոր աչքս բացի,  
 Տեսնեմ սիրտըս թալցած կ'անցնի:

Ո՛ւր ձեռնասուն աղախիններս,  
 Հաղար բարիք տեսնողք ձեռքէս.

Մէկը չիկայ, եղան ցիր ցան,  
 Պուտ մը ջուր ալ չիկայ որ տան:

Թագաւորներ ու թագուհիք  
 Ունայնութեամբ սուտ կը պարծիք.

Ա՛հ, օրինակ առէք ինձմէ,  
 Յետին աղքատն լաւ է մեզմէ:

Սուտ աշխարհիս երջանկութիւն,  
 Չունի երբէք հաստատութիւն.

Մարդ չիգիտէր ի՞նչ խեղճութիւն,  
 Ի՛նչ փորձանքներ գայ մեր գրլիսուն:

Ինչէր չեկան իմ ալ գրլիսուն,  
 Խաւարեցաւ աչքերուս լոյս.

Գիշերն հանգիստ չունէի քուն,  
 Յերեկ լայի մինչ իրիկուն:

Ինչէր կ'անցնէր, ո՛հ, իմ մտքէս,  
 Ի՞նչ մեծ ցաւեր չիտեսայ ես.

Աշխարհ մտնել չէի ուզեր,  
 Այլ խաբեց զիս ծընողաց սէր:

Գլխուս գալիք գիտէի ես,  
 Այլ մատնեցայ ես իմ տեսքէս.

Պէտք չէր դառնալ տրւած խօսքէս,  
 Այլ ծընողաց սէր զիս խաբեց:

Պարտք էր ինձի ծնողքս պատուել,  
 Այլ հարկ չիկար աշխարհ մտնել.

Ահա եղայ ցաւօք լըցուած,  
 Չի խաբեց զիս սէր ծընողաց:

Հայր իմ, մայր իմ, ա՛հ սիրելիք,  
 Եկէք տեսէք ձեր մէկ հատիկ,

Պատեցին զիս դառն ցաւեր,  
 Աս էր ինձի ձեր այնչափ սէր:

Երնէկ էր դուք չըսիրելիք,  
 Ըստեղծողիս սէրն էր հերիք.

Սիրականէս զիս բաժնեցիք,  
 Այսպէս անտէր թողիք գացիք:

Թէ անգամ մը ես խընտացի,  
 Անոր տեղը բիւր հեղ լացի.

Սըրտիս մէջ նոր վէրք կը բացուի.  
 Սէր ծընողաց ի՞նչ շահ ինձի:

Չիթողուցին զիս իմ կամքիս,  
 Որ կենացի տրւած խօսքիս.  
 Ես կուսուծիւն էի ուխտեր,  
 Ի՛նչ պէտք էր ինձ աշխարհ մրտնել:  
 Հօր, մօր խօսքէն ետ չիդարձայ,  
 Ուխտըս թողի կարգըւեցայ.  
 Նոքա մեռան՝ ես մընացի,  
 Լացով սրգով օրերս կ'անցնի:  
 Երսուն տարուան դեռ չեմ եղած,  
 Գլխուս չեկած բան չիմընաց.  
 Հարս ըլլալէս ի՛նչ շահ ինձի,  
 Երբօր իմ քօղ սև ներկեցի:  
 Այսչափ տարի ամուլ էի,  
 Զակի սիրոյն կը մաշուէի.  
 Երբօր խընտամ ըսի յանկարծ,  
 Այն խընտումս ալ դարձաւ ՚ի լաց:  
 Յըզի ըլլալ մարդ չիմացած,  
 Պիտի լըսէն թէ որք մնաց.  
 Ի՞նչպէս ցընծամ զակիս վըրայ,  
 Ասկէց էւել ի՛նչ ցաւ կ'ըլլայ:  
 Այս աշխարհիս բերկրանքն ու լաց,  
 Միշտ է այսպէս իրար խառնած.  
 Ուրախութեան պէտք չէ հաւտալ,  
 Եւ կամ ՚ի վիշտս անցոյս ըլլալ:

Երնէկ անոնց որ խաբուած չեն,  
 Սուտ աշխարհիս խընտումներէն.  
 Եւ երանի սրգաւորաց,  
 Որք սուրբ հոգւով են ըսփոխած:  
 Թէ խնդուծիւն թէ տրտմութիւն,  
 ՅՍստուծոյ դայ ամեն մէկուն.  
 Երնէկ կ'ըսեմ ես ան մարդուն,  
 Որ անփոփոխ կայ հաստատուն »:  
 Երբ այս խօսքեր կը զուրցէի  
 Ես ինքիրմէս դուրս կ'ելլէի.  
 Հաւաչանք մը գալով ներսէս,  
 Կ'արթըննայի կարծես քընէս:  
 Կը մտածեմ արդեօք ո՞ւր եմ,  
 Ինչո՞ւ այսպէս այլայլեր եմ:  
 Սըրտիս մէջը խնտում մը կայ,  
 Բայց աչքերէս արցունք կուգայ:  
 Կարդացած գիրս ձեռքս եմ բռնած,  
 Բայց չեմ յիշեր ի՛նչ էր գըրուած.  
 Այնչափ լացերս այն իմ ողբեր,  
 Բողոր մըտքէս դուրս են ելեր:  
 Չեւքի գիրըս հոն թողուցի,  
 Կը մտածեմ ինքբս ինձի.  
 Չեմ իմանար ի՛նչ պատճառաւ  
 Սիրտըս այնչափ այլայլեցաւ:

Ինքրս դարձայ ինծի կ'ըսեմ,  
 Ինչո՞ւ նըստեր կը մըտածեմ:  
 Ելայ գացի տանրս մատուռ,  
 Մըտայ ես ներս՝ փակեցի դուռ:  
 Աստուածածնայ պատկերին դէմ  
 Ինկայ գետին, կուլամ կ'ըսեմ:  
 « Մի թողուր զիս, կոյս տիրամայր,  
 Հիւանդ հոգւոյս դու միակ ճար »:  
 Եւ այս խօսքերս ըսած ատենս,  
 Կարծես լոյս մը կ'ելլէր բերնէս:  
 Սիրտըս ջահի նման վառէր,  
 Բարձրանայր լոյսն ամպերէն վեր:  
 Իսկ այն ներքին ուրախութիւն  
 Մերժեց ամեն ցաւ տրտմութիւն:  
 Տեսայ հաւատքս իբր անշարժ վէմ,  
 Անընկճելի թշնամեաց դէմ:  
 Յոյս աներկբայ և հաստատուն,  
 Յամեն վըշտաց կայր աննրկուն:  
 Սիրտըս փրբկէիս սիրով լըցուած՝  
 Ես իմ վըրաս եմ զարմացած:  
 Ացնիւ անոյշ հոտ մ'ալ կ'առնեմ,  
 Այն մեծ հաճոյքն ինչպէս պատմեմ,  
 Միտքըս այնպէս էր ըզմայլած,  
 Որ չէն տեսներ աչքերըս բաց:

« Յիսուս, ըսի, հոգւոյս իմ սէր,  
 Քեզ հաւատամ Աստուած իմ տէր:  
 Ի քեզ անկայ ես յարգանդէ,  
 Ծնորհացըդ լոյս վըրաս ծագէ:  
 Մինչ յետին շունչ կենաց իմոց,  
 Վառէ սէրըդ՝ պահէ անփորձ:  
 Յիսուս իմ տէր, փրբկիչ Յիսուս,  
 Մեղաւորին միակ ես յոյս:  
 Պատրաստ է սիրտս առ քեզ Աստուած:  
 Պատրաստ է կամքս քո հրամանաց:  
 Պատժէ տանջէ որքան կամքդ է,  
 Զիս քու կամացդ համակերպէ »:  
 Դեռ իմ խօսքըս չէր լըմընցած  
 Ամուր ձայն մը առի մտանց:  
 Դարձայ տեսնեմ ո՞վ է կանչող,  
 Այլ մարդ չիկար եկող գացող:  
 Մէկէն ճանցայ թէ Մարիամ կոյս,  
 Մայրն Աստուծոյ իմ հոգւոյս յոյս,  
 « Գեհովափէ կ'ըսէր, ելիւր,  
 Սուտ է այն գիր որ կարդացիր:  
 Զի զայն Գողոն ինք գըրեր է,  
 Որ քեզ խաբէ խայտառակէ:  
 Զըլլայ հաւտաս դու իր խօսքին,  
 Փեսայդ ընկճեց զիւր թըշնամին:

Քիչ ատենէն դառնայ փառքով,  
Մտնէ քաղաք յաղթող զօրքով.  
Մեծ հանդիսով զինք կընդունին,  
Բայց քու պատիւդ պարծանք խաչին:

Զի ճըշմարիտ քրիստոնէին,  
Խաչն է միակ պատիւ անձին.  
Գրրկէ՛ դուստր իմ խաչըդ սիրով,  
Յիսուս փրրկչիդ նըմանելով:

Վառէ լապտերդ կեցիւր պատրաստ,  
Մի փնտուեր դուն հանգիստ քեզ աստ.  
Որ երկնաւոր անմահ փեսայդ,  
Զքեզ ընդունի յիւրն առաջաստ:

Զի դու որչափ որ հոս տանջիս,  
Այնչափ փառօք հոն զարդարուիս.  
Այս է նըշան իւր սիրելեաց,  
Անոնք ժառանգ կըլլան փառաց »:

Երբ այս խօսքերն կը լսէի  
Հըրճուանք ՚ի սիրտ իմ գեղանի,  
Միտքըս այնպէս էր ըզմայլած,  
Որ չեմ գիտեր ո՛ւր եմ կեցած:

Մէյ մ'ալ քունէ զարթածի պէս,  
Տեսայ բան մը չիկայ առջևս.  
Իմացայ թէ տեսիլք տեսայ,  
Մարդ չիմացած տեղըս դարձայ:




Մըտածէի տեսած բաներս,  
 Կ'արմընայի ես ինքիրենս.  
 Աշխարհ այնպէս ելաւ աչքէս,  
 Չուզեմ մարդու տեսնել երես:  
 Զի աշխարհիս ամեն մէկ բան,  
 Լաւ հասկըցայ է ընդունայն.  
 Եւ Աստուծոյ սիրոյն 'ի զատ,  
 Երջանկութիւն չունենար մարդ:  
 Կամքս՝ Աստուծոյ օրհնեալ կամաց  
 Քանի որ չէր հըպատակած,  
 Ուզածրս ալ թէ կատարուէր՝  
 Հանդստութիւնս հաստատուն չէր:  
 Բայց այս ներքին սըրտիս բերկրանք  
 Այնպիսի ոյժ ազդեց ու կրակ,  
 Որ թէ տանջէն կրտրեն մարմինս,  
 Յաւ չեմ զգար իմ ներսի դիս:  
 Զի Աստուած է իմ զօրութիւն,  
 Նա ինձ 'ի վիշտս համբերութիւն.  
 Հողուով մարմնով եմ միշտ հանգիստ,  
 Երկիրս ինչպէս խռովէ զիս:  
 Այս լոյս շնորհաց իմ սրտիս մէջ  
 Հաստատ մընաց մինչև 'ի վերջ,  
 Կամքիս ընդդէմ ինչ ալ ըլլար,  
 Յաւ տրտմութիւն չէի ըզգար:






Ո՛ւր են լացերն հառաջանքներս,  
 Քուն չէր մտներ գիշերն աչքերս.  
 Հիմայ այնպէս ուրախ է սիրտս,  
 Որ չեմ ուզեր ինձ կարեկից:  
 Բայց չար Գողոն զիս տեսնելով,  
 Որ կը քալեմ ուրախ սրբտով,  
 Այնպէս կարծեց թէ կամքն եղաւ,  
 Ուստի յանկարծ խուցրս մտաւ:  
 Ծունկ կը չոքի ոտքքս կ'իյնայ,  
 Անգին ակունք ընծայ կուտայ.  
 Անըզգամին խելքը զլխէն  
 Բողբոլովին թրուեր կըրքէն:  
 Այլ ես մէկէն ժողվեցի զիս,  
 Արիութիւն մ'եկաւ սրբախ.  
 Ոտքի ելայ ծիծաղելով,  
 Կը հարցընեմ « Ո՛վ է մեռնող »:  
 « Մէր իմ, ըսաւ, դու ողջ կեցիր,  
 Միթէ գիրը չեկարդացիր.  
 Ես 'ի վաղուց ցանկայի քեզ,  
 Այսուհետեւ իմ տիկինս ես »:  
 Երբոր այս խօսք ես լսեցի,  
 Բարկութենէս զիս կորուսի.  
 Աւի գիրը պատրուտեցի,  
 Զինքն ալ տրնէն վըռնտեցի:




Քըթին բերնին այնպէս զարկի,  
 Որ ակուններն իրար կ'անցնի.  
 « Կորիւր, ըսի, դուրս ել տրնէս,  
 Մէյմ'ալ չըլլայ հոս ոտք կոխես »:  
 Լեզուն բերնին մէջ կապուեցաւ,  
 Ինչպէս փախչելն ինք չիմացաւ.  
 Մէյմ'ալ զինքը ես չտեսայ,  
 Կ'ըսեն բերնին եկած դուրս տայ:  
 Բայց ինչ կ'ուզէ թող ինք զըուցէ,  
 Սակից վերջը իմ հոգըս չէ  
 Բաւական է որ սրտսեցաւ,  
 Սիրտս ու հոգիս խաղաղեցաւ:  
 Անօրինին ըրած բաներ,  
 Ես կ'ամբնամ բերան առնել.  
 Թէ որ Աստուած չիխընայէր,  
 Անշուշտ նա զիս գըրլխէ հանէր:  
 Անոր համար այս բանս կ'ըսեմ.  
 Զի Աստուծոյ միշտ է ընդդէմ:  
 Պէտք չէ անձին մտորդ վտահի,  
 Որ չըլլայ թէ մէկէն սահի:  
 Զի փորձութեանց նա կը յաղթէ,  
 Որ 'ի յաւթից հեռու քալէ.  
 Օտար մարդու սէր չընդունիս,  
 Զըլլայ վերջը երիս մըրկիս:





Օրհնեալ ըլլայ տէրն իմ՝ Աստուած  
 Որ զիս փրկիէց յամեն չարեաց.  
 Շատ փորձանքներ հասան վերաս,  
 Բայց անվընաս ծընաւ տղաս:  
 Այս բանս իրաւ մեծ պարգև էր,  
 Փրկիչիս սիրոյն ալ նըշանն էր.  
 Բայց իմ խընտուամն չէր կատարեալ,  
 Որ կ'ըսէին թէ մանչ ծընար:  
 Զի կատարեալ խնտում հօր մօր,  
 Զի զաւակաց ընծայուած օր,  
 Այլ երբ մեծնան բարի վարքով,  
 Եւ ժառանգէն օրհնէնքներով:  
 Աստուածային բարեաց վըրայ  
 Պէտք է որ մարդ ուրախ ըլլայ.  
 Այլ շատ անգամ 'ի բարւոյ չար  
 Երբ ելլէ դուրս, մենք ենք պատճառ:



Պիտենք զաւակն մեծ պարգև է,  
 Անպարտուղ ծառն ո՞վ կը սիրէ.  
 Բայց երբ դառն է պրտուղ ծառին  
 Կացնին կ'ըլլայ ինքն ալ բաժին:  
 Նոյնպէս օրդի չար բտահակ,  
 Իւր ծընողացն է անարգանք.  
 Կ'ըսեն փուշէն չըլլար խաղող,  
 Տատասկէն թուղ ո՞վ է քաղող:  
 Քանի քանի հայրեր մայրեր,  
 Սըգով իրենց խընտուամն ներկեր.  
 Լաւ էր, կ'ըսեն, քար ծընէինք,  
 Քան այս պատժիս մէջ իյնէինք:  
 Երբ դժոխքին բացաւ բերան,  
 Սասանեց զիս ծընողաց ձայն.  
 Ի՞նչ անէծքներ ի՞նչ հայհոյանք,  
 Ո՛հ, կ'ըսէին, զաւակով կորանք:  
 Այս բանս բընաւ մըտքէս չելլեր,  
 Ահով դողով սիրտս է երեր.  
 Զի զի՞նչ օգուտ ծընած արղաս,  
 Երբօր տեսնեմ բաժին դիւսաց:  
 Մարդուս բերկրանքն ըլլայ չափով,  
 Վախճանն ալ միշտ միտք բերելով.  
 Լաւ է վիժածն հողը պառկած  
 Քան մկրտուածն դըժոխք գացած:

Երնորհ ունիմ պարգևողին,  
 Ձի կը ճաննամ զյարգ պարգևին.  
 Վախրս միայն է պարգևէն,  
 Չիբաժնէ զիս պարգևողէն:  
 Եւ ոչ վայրկեան մ'ենք ապահով,  
 Որովհետև աշխարհս է ծով.  
 Յանկարծ տեսնես կ'ելլէ քամի,  
 Տանի զարնէ յապառաժի:  
 Ուստի պէտք չէ մենք վստահինք,  
 Չիկարծած տեղ յանկարծ սահինք.  
 Փայտ փրկութեան խաչին կընիք,  
 Սնով միայն մենք փրկուինք:  
 Այս վերջի խօսք ըսած ատենս  
 կարծես մէկը կ'ըսէր ներսէս.  
 Քրքիստոսի սուրբ խաչափայտ,  
 Որդւոյդ վրան պահէ հաստատ:  
 Տաններորդ օր սըրբոյ զատկին,  
 Յորում էր տօն դիւտ սուրբ խաչին  
 Եկան զտղայն մըկըրտեցին,  
 Սպիրիտինն անուն դրին:  
 « Գոնէ, ըսին, իր հօրն անուն,  
 Թող յիշատակ մընայ որդւոյն,  
 Որ մտքերնէս չէլլէ բընաւ  
 Ինչ որ նա մեզ բարիք ըրաւ »:

Որովհետև որ խաբուեր են  
 Չար Գողոնին շինծու թըղթէն.  
 Եւ ըզփեսայս մեռած կարծեն,  
 Որդին հօրը ժառանգ կ'ուզեն:  
 Այսպէս Գողոն արինկըզակ  
 Խաբեց զամենքն անխղճմբտանք.  
 Բայց ինչ չարիք որ հանձարեց,  
 Չարեաց պտուղն նախ ինք քաղեց:  
 Եւ զիս մինակ խաբել կ'ուզէր  
 Որ իւր չար կամքն առաջ տանէր.  
 Սպիրիտինն մեռաւ, կ'ըսէր,  
 Բայց ձայնը դուրս ելլել չուզէր:  
 Երբ իր ուզած չաջողեցաւ,  
 Եւ մեռածին ձայն դուրս ելաւ,  
 Ուղէ չուղէ սուտն հաստատեց,  
 Ես եմ ժառանգն ըսաւ քալեց:  
 Չէր գիտեր խեղճ ողորմելին,  
 Թէ ոչ երբէք զինքն ընդունին.  
 Թէ որ մեռաւ Սպիրիտինն՝  
 Կ'ըսեն չըլլայ իշխէ Գողոն:  
 Պէտք չէ մեզի ուրիշ ժառանգ,  
 Որդին դընէ թող հօրը թագ.  
 Մեռած հօրը նոր է եղած՝  
 Մանուկ տըղան ժառանգ նստած:

Այս բանս այսպէս որոշեր էն,  
 Մեծամեծներն հին ցեղերէն.  
 Ամենևին Գողոն չուղեն,  
 Թող քաղքէն ալ ելլէ կ'ըսեն:

Եւ Պըրիմոս անուն ծերուն  
 Որ սիրելի էր ամենուն,  
 Տըւին պատիւ տեղակալի՝  
 Ինչուան տրղան յարեունս հասնի:

Տասուերկու ծեր ընտրուեցան,  
 Որ ամեն բան իրենք հողան.  
 Իրենց մէկը թէ դէմ դառնայ  
 Պատու հասուինա անխընայ:

Աս ծերերը ընտրուեցան,  
 Իբրու իշխանք ժողովըրդեան.  
 Վերջը վիճակ երբ ձրգեցին,  
 Ելաւ վիճակն տասուերկուքին:

Սա հմանեցին Գողոնի դէմ,  
 Որ չի կենայ իրենց ընդդէմ.  
 Ինն օրուան մէջ գործը տեսնէ,  
 Տասներորդին քաղքէն ելլէ:

Բայց նա կ'ըսեն իրեք օր վերջ,  
 Չէ երեցած քաղաքին մէջ.  
 Գիշեր ատեն նաւ մը կուգայ,  
 Կ'առնէ զինքը շուտով կ'երթայ:

Այլ զարմանամ էս իմ վըրաս,  
 Որ չիմացայ անձինս վընաս.  
 Սպիրիտին ող է գիտեմ,  
 Ինչու համար էս չիյայտնեմ:

Ահա այսպէս մարդիկ շատ հեղ  
 Իրենք զիրենք մատնեն զուր տեղ.  
 Ամեն բանի վերջ մըտածես  
 Շատ փորձանքէ ըզքեզ փրրկես:

Բայց էս շատ գէշ սրխալեցայ.  
 Երբոր չըսի թէ ող է նա.  
 Պէտք էր նաև յայտնի ըսել,  
 Թէ զիս Գողոն կ'ուղէր խաբէր:

Այլ էս որչափ որ ամըջայ,  
 Այնչափ մարդկանց մէջ խաղք եղայ.  
 Թէ որ աս բանս իմանային,  
 Այսչափ չարիք չէր ծընէին:

Իմ սխալմունքս ըլլայ խորատ,  
 Այսպէս փորձանք թէ գայ վըրադ՝  
 Հանձարեղ մը մէկէն ընտրես,  
 Ամեն մէկ բան տեղովն յայտնես:

Թէպէտ իրաւ գընաց Գողոն,  
 Բայց չար լեզուն թողէր էր հոն.  
 Վըրաս չըսուած բան չըմնաց,  
 Չիս համարին պատճառ չարեաց:



Ո՛հ, շատ անգամ դժբաղդաբար  
Մարդս է ինքիր չարեաց պատճառ.

Բայց ուրիշէն զայն կարծելով,  
Լեզուին կուտայ բամբասելով:

Այսպէս Գողոն ամեն չարեաց  
Պատճառ ըլլալն էր իմացած.

Բայց որպէս զի զինքն ազատ է,  
Իմ անունըս կը բամբասէ:

Այն սուտ գիրը որ ինձ տըլաւ,  
Կ'ըսէ եղեր, չիյտեմ՝ բընաւ

Սպիրիտինն ո՞ղջ է մեռած,  
Ամենևին ես չեմ լըսած:

Ասոր նըման ուրիշ թըղթեր  
Կարդացեր է անմիտ բաներ.


Իրեն այսպէս գըրած ըլլամ,  
Թէ փեսայիս թաղ քեզի տամ:

Արո՛ւն մըտքէն կընար անցնիլ.  
Զուր տեղն այսպէս բերան իյնիլ.

Բայց զըպարտողն երբ է անխիղճ,  
Զըրպարտուողին ջանքն է ոչինչ:

Շատ մարդ, կ'ըսեն, չենք հաւատար,  
Բայց անոնց ալ ես չեմ հաւտար.

Աստուած չընէ ոտքդ որ սահի,  
Սերելիդ ալ ծուռ կը նայի:



Այլ թող մարդիկ զիս բամբասեն,  
Ես չեմ խորշիւր եկած խաչէն,

Գըլխուս չեկած բան չիմաց,  
Հընազանդ եմ փրկչիս կամաց:

Շատ օր չանցաւ հասան թըղթեր,  
Յայտնուեցան ամեն սուտեր.

Սպիրիտինն իրեն զօրքով,  
Շուտով դառնայ յաղթանակով:

Մարդ չիմընաց չուրախացող,  
Բայց ծերերուն սիրան ելաւ դող.

Ամենք մէկդի թողին փախան,  
Զիս թողուցին սըրոյն բերան:

Գողոնին խօսք սուտ չէր ըսին,  
Վըրաս ամեն բան կնքեցին.

Բացուեցաւ դուռ բամբասանաց,  
Կ'ըսեն ամեն բերնին եկած:

Սպիրիտինն դեռ չըհասած,  
Քանի մը ծեր գան ընդ առաջ.

Եւ կը ջանան որ ես չըսած,  
Յայտնեն իրենց անմեղ եղած:

Բայց իրենցմէ առաջ Գողոն,  
Շուտ մը նաւով հասեր էր հոն.

Սպիրիտինն, կ'ըսեն, յանկարծ  
Երբոր տեսաւ Գողոն եկած,



Հարցուց մէկէն « Ինչո՞ւ եկար,  
 Ատ գալդ ինձի լաւ չե՞րեւար.  
 Ըսէ շուտով բան մի ծածկեր,  
 Սիրտս 'ի վաղուց վախի մէջ էր » :

Գողոն այնպէս սկսաւ լալ,  
 Որ տեսնողին ցաւը կուգար.  
 Գլխուն մազեր կը փրցընէր,  
 « Ո՛հ անբաղդ եմ, կ'ըսէր, ո՛վ տէր :

Տէրութիւնդ ձեռքէդ ելաւ  
 Գե՛նովափէն պատճառ եղաւ .

Այս բանս վաղուց ես գիտէի,  
 Բայց յայտնելու կ'ամբնայի :

Քու երթալէն վերջը յայտնի  
 Վերուց ամօթն եղաւ լրկտի .

Աչքովս տեսայ ամեն ըրածն,  
 Ալ ծածկելու բան չիմընաց :

Այնչափ ողորմ յորդորանքներս,  
 Ամենեւին անոր չազդեց .

Սպիրիտին կ'ըսէր մեռաւ,  
 Չկտեմ ուսկից մանչ մ'ալ ծընաւ .

Սպիրիտին դըրաւ անուն,  
 Սա է, կ'ըսէ, տէր ամենուն .

Սիրելիներն իշխան կարդեց,  
 Անոնց ձեռքով զիս հալածեց :

Ահա այս է իմ ըսելը,  
 Ձրես վերջ՝ ինչո՞ւ չսիր .

Ըսի ինչ որ ինձի հարկ էր,  
 Այլքու կամայդ դու ինքդ ես տէր » :

Սպիրիտին այս խօսքերէն  
 Այնպիսի ցաւ ըզգաց ներսէն,  
 Որ փոխուեցաւ դոյն երեսին,  
 Այլայլութիւն մ'եկաւ սրբտին :

Բայց զի ունէր նա սիրտ բարի  
 Ինքզինք բըճեց որ չայլայլ .

« Լաւ է, ըսաւ, իւր կիրք զսպել,  
 Քան ուրիշին մեղքը քըննել :

Մեղապարտը դատել պատժել,  
 Ո՛վ ալ ըսես կըրնայ ընել .

Բայց դատաստան արդար դատել  
 Աստուծոյ է միայն վայել » :

Ըսաւ աս խօսքս, թողուց դընաց,  
 Կարծես բընաւ չէր շրիթած .

Չի ամնամուտ էր վաղուան օր,  
 Պաշտօնատեարք կ'որոշուին նոր :

Կը պատրաստուին բոլոր զօրքեր,  
 Ճամբայ ելլել դառնալ տեղեր .

Հարիւր հազար զօրաց մէջէն,  
 Յիսուն հոգի մեռած գըտնէն :

Թըշնամեաց զօրքն այնչափ շատ էր,  
 Որ մէկին դէմ հինգ մարդ կ'երլէր.  
 Թէ մարդկային ուժի մընար,  
 Մեր զօրքն ամեն գերի կ'իյնար:

Ա.յԼ Տիրամօր Աստուածածնայ,  
 Հըրաչքն յայտնի հոն կ'երևնայ.  
 Սպիրիտին ծեծ չըսկըսած,  
 Իր սիրոյն էր ապաւինած:

Եւ յաղթելէն վերջն ալ իրաւ,  
 Իւր խոստմունքը առաջ տարաւ.  
 Ա.յս անուշով ժամ մը շինեց,  
 Ազատարար սուրբ կոյս կոչեց:

Քանի մ'օրէն էրք նաւ մըտան,  
 Որ ալ իրենց տեղեր դառնան,  
 Հասան քաղքէն դացող ծերեր,  
 Ներկայացան տըւին գըրեր:

Բոլոր քաղքով վրկայեցին,  
 Վասն իշխանաց թէ մեղք չունին.  
 Գենովաիէն զամենքն խաբեց,  
 Մեռած անուշդ նա տարածեց:

Սպիրիտին մեծ մեծ պատուով,  
 Առաւ ծերերն նըստեցուց քոյն.  
 Հանդարտութեամբ հարցուց լսեց,  
 «Մեղքս է, ըսաւ, խօսքը գոցեց»:

Է

Յաջողութեամբ հասան նաւեր,  
 Բազմութեանը տեղ չիբաւեր.  
 Օրով առաջ ամեն տեղաց,  
 Արք և կանայք հոն են ժողված:

Այնպէս խընտում հասարակաց  
 Մօտ տարիներն չէր տեսնուած.  
 Երբ նաւերէն ելան ցամաք,  
 Ինչ ինտում էր ինչ աղաղակ:

Արք և կանայք մանչ թէ աղջիկ,  
 Առ հասարակ մեծ ու պզտիկ,  
 Ուրախութեամբ կանչէն կեցցէ,  
 Սպիրիտին տէր մեր կեցցէ:


Բայց նա մատը դըրած բերնին,  
 Ու կ'աղաչէր որ հանդարտին.  
 Առաջ մըտաւ եկեղեցին,  
 Տալ գոհութիւն յաղթող փրկչին:

Ելաւ ժամէն կուտայ ողջոյն,  
 Ծիծաղերես ամեն մէկուն.  
 Երնորհակալ եղաւ զօրքին,  
 Հրաման տուաւ որ գան ժողովին:  
 Հոն ամենուն յատուկ ձեռօք,  
 Իրենց թողակ տայր եւելօք.  
 Վերջը կարգաւ կեցան դիմաց,  
 Ենորհակալ եղան սրբոսանց:  
 Տրաւ հրաման որ արձըլուին,  
 Երթան իրենց տեղերն հանգչին.  
 Ուրախութեամբ ելեր կ'երթան,  
 Կ'եղանակեն երգ յաղթութեան:  
 Այլ իմ սիրտըս արդեօք կ'ուլոր,  
 Թէ մարդկանց հետ սուտ կը խնտար.  
 Որովհետեւ լաւ հասկըցայ,  
 Որ ալ ինձի խընտում չիկայ:  
 Չուզեց բընաւ նա զիս տեսնել  
 Երեսն մէկդի կը դարձընէր.  
 Հրաման տուաւ որ արգիլեն,  
 Թէ որ ուզեմ երթալ իրեն:  
 Գողմն իրաւ սիրտն ունի դող,  
 Չի լաւ գիտէ թէ ինքն է գող.  
 Բայց զուր տեղը երբ զիս մատնեց,  
 Անշուշտ իւր կամքն կ'ընեմ կարծեց:

Չեռաց տակէն խըրկեց մարդիկ,  
 Որոնք էին իրեն մօտիկ.  
 Կը խոստանար զիս ազատել,  
 Թէ որ խօսք տամ իր կամքն ընել:  
 Երբոր այս բանս կը լըսէի,  
 Ես ինքիրմէս դուրս կ'ելլէի.  
 Այնպէս սիրտըս կը զայրանար,  
 Որ զիս բռնեւ չէի կրնար:  
 Թէ Աստուծոյ չըվախնայի,  
 Եկողները կը սպաննէի.  
 Այնչափ իրմէն զըզուած էի,  
 Անունն լըսել կը գարշէի:  
 Իրաւ մեղքէ փախչելու է,  
 Այլ թշնամին ատել պէտք չէ.  
 Ատելութիւնս Գողմնի դէմ,  
 Չիս խորխորատ ձրգեց գիտեմ:  
 Բայց դու տես թէ վերջն ինչ եղաւ,  
 Ինչ չարիքներ առաջ չեկաւ.  
 Իմ կործանմանս պատճառ ես եմ,  
 Թէ որ շխտակն ըսել ուզեմ:  
 Ետքի բանը միտք չընողը  
 Սըրտէն չելլեր ահն ու դողը.  
 Ուրիշին փոս փորէ՛ չափով,  
 Որ թէ ինչիս ելլես շուտով:



Վրբէժինդիր մ'ըլլար չարին,  
Որ քեզ չտայ վընաս կրկին.  
Եթէ գիտենք տէր կայ երկինք  
Պէ տք չէ չարին չարիք խորհնք:  
Թէ աս բաներս նախ միտքս լինար,  
Այս չարիքներ չէր առաջ դար.  
Գողոն ինքն ալ թէ և միշտ չար,  
Իր ըրածէն ինք կ'ամբչնար:  
Ինչ ալ էր նէ գըտայ պատիժս,  
Չի սրբբեցաւ մուրն երեսիս.  
Վրկայուեցան ամենքն արդար,  
Չիս վըճուեցին չարեաց պատճառ:  
Եւ այս վըճիւ իմ յանցանաց,  
Նախ թէ շինծու գիր եմ հանած.  
Երկրորդ թէ ազգս ոտք հանեցի,  
Անհարազատ ստացայ որդի:  
Իրաւ աչքերս արիւն կուլայ,  
Բայց սիրտըս չէր տակնուվրայ.  
Փըրկչիս կամաց զիս յանձնեցի  
Սիրտս ու հոգիս անոր տըւի:  
Այս բաներով երբ շըւարած,  
Մըտածէի գըլխէս անցած,  
Տեսնեմ յանկարծ հասան վըրաս,  
Կատղած մարդիկ աչքեր մըլժնած:



Մարդկային գութ չըկայ սրբտերն,  
Աչուրներէն արիւն կաթէր.  
Երբ կը կանչեն կը կանչուրտեն,  
Մարդուս խելքը կ'առնեն գըլխէն:  
Միթէ մայրեր ծնան զասոնք,  
Գայլերո՞ւ հետ սընան արդեօք.  
Երբ կը քաշեն կը քաշիրուտեն,  
Սիրաբս մարի սաստիկ ցաւէն:  
Լաթերս բոլոր պատըռտեցին,  
Գըլխուս մաղերն ալ փետտեցին.  
Ու ձեռուրներս ետին կապած,  
Գուրս հանեցին գըլուխըս բաց:  
Ի՞նչ չեն ըսեր եւեւ պակաս,  
Անմեղ տըղան վիզս են կապած.  
Ծեծ թուքումուր և հայհոյանք,  
Մինչև հասանք 'ի հրապարակ:  
Քաղաքն ամեն ժողովեցաւ,  
Վայ ականջիս ինչեր լուաւ.  
Մեծամեծներ իշխաններէն  
Ամենք փախչին երես պահէն:  
Միայն Գողոն լիբը և գուռը,  
Եկաւ ձիով մօտեցաւ քովս.  
« Խօսք տուր ինձի քեզ ազատեմ,  
Գէթ իմացիր թէ ես ո՞վ եմ »:

Նորէն այս խօսքս երբ լռեցի,  
 Մէկէն վերան կանչուրուտեցի.  
 « Հազար անգամ կ'ընարեմ մեռնիլ,  
 Քան թէ փրկչիս կամբէն անցնիլ:  
 Թող խեղճ մարմինս հոս չարչարուի,  
 Որ մեղքերուս աղտ ջնջուի.  
 Արդարութիւն մեզի կ'օգնէ,  
 Ի մարդկանէ երբ յոյս կըտրէ »:  
 « Արիւնդ, ըսաւ, ըլլայ գլխուդ,  
 Դու ես պատճառ կորսրելուդ.  
 Երբոր չուզես կամքս ընել,  
 Ես ալ գարշիմ ըզքեզ տեսնել »:  
 Հանեց ծոցէն մահուանս վըճիռ,  
 Բազմութեան մէջ կարդաց այն գիր.  
 Անօրէնը դեռ կը կարծէր,  
 Թէ չեմ մերժեր ես իրեն սէր:  
 Երբոր գերը կը կարդային,  
 Մարդիկ ցաւօք վերաս նային.  
 Այլ ինձ ազգում մ'եղաւ ներսէս,  
 Թէ կը յաղթես երբ համբերես:  
 Նաև այնչափ սիրտս ուրախ էր,  
 Միտքս բընաւ չէր շփոթեր.  
 Կը կարծէի թէ խաչս առեր,  
 Ելեր կ'երթամ Գողգոթայ լեռ:

Բայց զիս տանող անդուժ դահչաց,  
 Տըլաւ Աստուած սիրտ ողորմած.  
 Երբոր հասան քաղաքին ծայր,  
 Տըզան առին շալակէս վար:  
 Իրենց մէջը ծածուկ կ'ըսեն,  
 « Ի՞նչ հասկըցաք դուք այն խօսքէն.  
 Ինչո՞ւ Գողոն կ'ըսէր խօսք տուր,  
 Կարծեմ աս խեղճ մատնեցաւ զուր:  
 Նա չերևար թէ է արդար,  
 Ինչո՞ւ համար սա խօսք չիտար.  
 Սիրտը շիտակ չէր այն մարդուն,  
 Յայտնի ցրցուց զիւր չարութիւն:  
 Կ'երևնայ թէ անպարտ փուճ տեղ,  
 Պիտի մեռնի այս կին անմեղ.  
 Սպիրիտինս, ափսոս խելքին,  
 Պէտք չէր հաւտալ անօրինին:  
 Այնպէս շատ հեղ խելօք մարդիկ,  
 Բերեն իրենց մեծ նախատինք.  
 Քրտու մարդկանց երբ կը հաւտաս,  
 Հարկաւ օր մը ծաղըր կ'ըլլաս:  
 Ի՞նչ անմեղներ զուր տեղ կ'այրին,  
 Մեծն որ չըլլայ տէր իր խելքին.  
 Եւ ի՞նչ զարմանք թէ անօրէնք,  
 Անանկ ատեն յաղթանակեն »:

Ատոնց նրման ուրիշ բաներ,  
 Մէկն մէկալին հետ կը խօսէր.  
 Մինչև հասանք գետի մը բով,  
 Որ վաղերով կը թափէր ծով:  
 Հոն կանկ առին քիչ մը կեցան,  
 Բերին գիրկըս տըւին տըղան.  
 Այս է, կ'ըսեն, մեզ հըրամանք,  
 Որ ձեզ ջուրը ձրգէնք դառնանք:  
 Մն առենը աչքերս լեցուած,  
 Հառաչեցի առ տէր Աստուած.  
 «Տէր իմ, ըսի, ներէ մեղացս,  
 Եւ մի՛ զըրկեր զիս 'ի փառաց»:  
 Երբոր զըղձումս ըրի սըրտանց,  
 Կեցայ պատրաստ որդիս գըրկած.  
 Ինչպէս անգութ գայլին դիմաց,  
 Փառն ու ոչխար կան թալկացած:  
 Պան դահիձներն վըրաս նային,  
 Ու ցաւերով ետ դառնային.  
 Կը միանան ջուրը ձրգել,  
 Կը դողդըղայ ձեռքերն սոքեր:  
 Քանի որ մեզ կը տեսնէին,  
 Այն խեղձութեան կը գըրթային.  
 Ո՛վ է տեսեր այսպիսի բան,  
 Մնգութ դահիձք բարձրաձայն լան:

Վեր վար քալեն ճար չեն գըտներ,  
 Զուրը ձրգել չերթար ձեռքեր.  
 Մըտածելու դային մէկդի,  
 Որ խօսածնին մընայ դաղտնի:  
 Կը վախնային ալ իրարմէ,  
 Մէկն զմէկալ չըլլայ մատնէ.  
 Խօսք մէկըրին ու երգուընցան,  
 Զըլլայ մէկուն յայտնէս այս բան:  
 Վերջը եկան ըզմեզ առին,  
 Տարին դաշտ մը մծտ անտառին.  
 «Մեղք են, կ'ըսեն, թող չիմեռնին,  
 Պոնէ գըթանք անմեղ տըղին»:  
 Մէյմ՝ ալ տեսնեմ թողին փախան,  
 Ո՛րն հոս սրն հոն եղան ցիր ցան.  
 Զըլլայ կ'ըսեն ճամբան սորվի,  
 Ետևներնէս դայ ու հասնի:  
 Այլ իմ աչքերն արցունք լեցուած,  
 Հազիւ տեսնեմ դէմքս եղած.  
 Ի՞նչպէս անճամ եղած ճամբաս,  
 Ու ետ դառնամ չիմիրրած:

Ը.

Մարդուս գրչեսն ինչէր չանցնիր,  
 Վիշտք, նեղութիւնք չեն պակասիր.  
 Այլ թէ ըլայ համբերող ժիր,  
 Դրժուարութեանց յաղթէ իժիր:  
 Այն դաշտին մէջ որդիս գրրկած,  
 Չորս դիս նայիմ յուսահատած.  
 Ո՛հ, ես ինքզինքս կորուսեր եմ,  
 Կամ թէ ուր եմ բընաւ չիյտեմ:  
 Ատենն անցաւ, վերջը կարծես,  
 Քունէն զարթած գառան մը պէս.  
 Որ թրփերուն տակը պառկած  
 Չէ իմացեր հոլուին գացած:  
 Կը դարձրնէ աչքերն չորս դին,  
 Այլ չիրտեր ձայն երամին.  
 Յոգնած վաղէ ասդին անդին,  
 Այլ անօգուտ է ջանք խեղճին.

Մէյմը լեւը կ'ելէ լալով,  
 Նորէն կ'իջնայ դաշտ մայելով.  
 Կրկնէն ժայռեր իւր մային ձայն,  
 Նա երամին կը կարծէ ձայն:  
 Այսպէս և ես բացի աչքերս,  
 Չիյտեմ բընաւ ես ինքիրենս.  
 Երբոր խեղքս գրչուիս եկաւ,  
 Մըտածէի ինձ ինչ եղաւ:  
 Աչքերս հոս հոն կը դարձընեմ,  
 Յուսարով թէ մարդ մը տեսնեմ.  
 Մէյմը ասդին մէյմը անդին,  
 Կը պրտորտիմ չորս դին դաշտին:  
 Տեսնեմ չիկայ ոչ մարդ ոչ ձայն,  
 Ո՛հ, մընացի անօգնական.  
 Խեղքս գրչեսն առնըւեցաւ,  
 Որուն պատմեմ ես սրբախ ցաւ:  
 Մէկ ձայնս երկինք մէկ ձայնս դետին,  
 Զուր կանչուըտեմ կողկողագին.  
 Լեռներ ձորեր խօսին կանչէս,  
 Ես կը խաբուիմ ինքիր ձայնէս:  
 Տըղաս գրրկէս վար ձրգեր եմ,  
 Չիյտեմ ուր եմ ուր կը քալեմ.  
 Մէյմ՝ ալ երբոր ձայնն լսեցի,  
 Որդեկորոյս դարձայ հաւի:


Ինչպէս վազածս ես չիգիտցայ,  
 Ուրիշ ցաւերս ամեն մնուցայ.  
 Մայրական դուժս այնպէս յորդեց,  
 Որ վախ սարսափ սրբառէս մերժեց:  
 Հասայ գիրկըս առի տղան,  
 Խանդաղափ սիրտըս վերան.  
 Սէր գըթուժիւն երբ միանան,  
 Մայրերն ինչպէս կը դիմանան:  
 Մօտ էր արեւն մայր մոռնելու,  
 Չայն կը լծեմ թրուզններու.  
 Որ խըմբովին բոյներ կ'երթան,  
 Չըլլայ մընան մուժ գիշերուան:  
 Վերուցի աչքս տեսայ կ'անցնին,  
 Թըռաւ իմ սիրտս ալ հետերնին.  
 Աչքերս անթարթ գիտէր ճամբան,  
 «Ո՞ւր են, կ'ըսեմ, ձեր իջլան:  
 Վայ ինձ հապա ես ո՞ւր երթամ,  
 Ո՞ւր տեղ ինծի հանգիստ գըտնամ.  
 Զուր չեմ՝ վազեմ ես ծոփն իջնամ,  
 Հանգստութեանս վրայ խընտամ:  
 Զագ չեմ, թըռչիմ տեղըս հասնիմ,  
 Ընկերներով մըխիթարուիմ.  
 Ո՛վ արեգակ դու ո՞ւր կ'երթաս,  
 Զիս մուժիւն ձեռք ինչպէս թող տաս:

Ա, յս վերջին գուժ ցըցուր վրաս,  
 Տեղ մը մոռնեմ մուժը չեկած.  
 Թող գերեզմանս ըլլայ մարմնոյս,  
 Մեռնելէս վերջ չիմընամ դուրս»:  
 Ասոնց նման ուրիշ խօսքեր,  
 Զըրոյ նման բերնէս վազեր.  
 Մէյմ'ալ ինքքս ինծի եկայ,  
 Եւ մեղանչելս մէկէն գիտցայ:  
 « Ինչո՞ւ, կ'ըսեմ, յիմարեցայ,  
 Ինչո՞ւ տըռած խօսքէս դարձայ.  
 Երբ Աստուծոյ եմ զիս յանձնած  
 Սիրով պէտք է տանիլ վըշտաց»:  
 Եւ այս վերջի ըսած խօսքէս,  
 Ոյժ մը հասաւ սիրտըս ներսէս.  
 Ծընկան վըրայ ելայ կեցայ,  
 Զիս յանձնեցի Աստուածածնայ:  
 Հարաւային կողմը դաշտին,  
 Տեսնեմ հեռու չէր անտառին.  
 Կարծես ձաղեր իրենց բունէն,  
 Մնոյշ ձայնով զիս հոն կանչէն:  
 Միտքս ձայներէն այնպէս մայլէր,  
 Կարծես նորա են իմ ընկեր.  
 Ա, յսպէս քաղցր է ընկերութիւն,  
 Եւ յիրաւի միշտ վայ միոյն:

Թէ և ըլլայ անբան թրուռուն,  
 Այժ է սրբոտի մինակ մարդուն.  
 Չիկայ անանկ դրժուարին բան,  
 Բայց երբ մընաս անօգնական:  
 Քանի մուծը դեռ չէ կոխած,  
 Ի՞նչ կեցեր եմ դաշտին մէջ բաց.  
 Երթամ ըսի ծառի մը տակ,  
 Որչափ ըլլայ անտառն է փակ:  
 Վազվազելով եկայ հասայ,  
 Գալուս վրայ շատ զըջկացայ.  
 Կատղած գայլեր առին չորս դիս,  
 Վախէս լեզուս կրպաւ քիմքիս:  
 Ահա դողով ետ քաշուեցայ,  
 Բայց փախչելու հընարք չիկայ.  
 Զուր կը կանչեմ կը կանչուրուտեմ,  
 Զայնովս հաւ չեն որ վախցընեմ:  
 Ետիս առջևս բուրբուեցան,  
 Հաչեն կ'ոռնան ամենք մէկ ձայն.  
 Ահա աներնին երբ կըճրտեն,  
 Վախէս խելքս գըլխէս կ'առնեն:  
 Մի՛թէ քարէ՞ ոռնիմ ես սիրտ,  
 Պատեցին զիս նեղութիւն վիշտ.  
 Մահուան երկունք հասան առ իս,  
 Սաստիկ տանջէ չառնուր հոգիս:

Ո՞ր մէկ ցաւի դիմանայ սիրտս,  
 Մուծը արդէն սարսափեց զիս.  
 Ծարաւ քաղցած, չիկայ ջուր հաց,  
 Եւ ոռնեցած ոյժս ալ գընաց:  
 Այլ զամեն ցաւ դարձեալ մոռնամ,  
 Երբոր զաւկիս լաց կը տենամ:  
 Վայ ինձի պէս մայր եղողին,  
 Այսպէս զաւակ մեծցընողին:  
 Վախս ու կըսկիծս խառնուեցաւ,  
 Տակնուվըրայ սիրտըս եղաւ.  
 «Վըշտացերոց յոյս, Տիրամայր,  
 Խընդրեմ հասիր մի ուշանար:  
 Ո՛վ Աստուած իմ, գըթա խեղճիս,  
 Ասոնք քիչ են մեղքիս պատիժ.  
 Միայն խնդրեմ ոյժ տուր հոգւոյս,  
 Որ չընկըղմիմ թողեալ անյոյս:  
 Մի՛ դու Տէր իմ, Տէր բարերար,  
 Մի՛ իմ ուժէս վեր պատիժ տար.  
 Որդւոյս լացին չեմ դիմանար,  
 Ո՛հ, քարերն ալ թող չըլլան մայր:  
 Գիտեմ Տէր իմ, եմ մեղաւոր,  
 Այլ աս մեղքիս չեմ պարտաւոր.  
 Տուր ինձ բառնալ խաչող սիրով,  
 Բարեխառնէ սրբոտիս գորով:

Ասիկց եւել պատիժ չըլար,  
Մէկ մեղաւոր մօր մը համար.  
Երբոր զաւակն աչքին առջին,  
Քաշէ զպատիժ մօրը մեղքին:  
Գիտեմ վասն իմ ըզսա պատժես,  
Որ աւելի սիրտըս տաղես.  
Ո՛վ Աստուած իմ, ի՞նչ դէմ կենամ,  
Երբոր մեղքերս լաւ կը ճանչնամ:  
Ի՞նչպէս ըսեմ վերցուր խաչըդ,  
Հակառակիմ քօ կամացըդ.  
Այլ երբ կ'ըսեմ գըթա՞մ զաւկիս,  
Նոյն է ըսել վերցուր պատիժս:  
Երբ մեղաւոր կը ճանչնամ զիս,  
Պէտք է սիրող ըլլամ խաչիս.  
Ուստի չիկայ ուրիշ ճամբայ,  
Քու սուրբ կամքդ օրհնեալ ըլլայ:  
Չարչարէ զիս ինչպէս կամիս,  
Մի՞ զիս թողուր ինքիւր կամքիս.  
Նըւիրեմ քեզ զիս ու որդիս,  
Ընդունէ զօհն անարժանիս » :  
Աս որ ըսի ոտքի ելայ,  
Փայլատակած լոյս մը տեսայ.  
Գայլերն լուսէն եղան ցիր ցան,  
Մէկ մ'ալ չէկան չիմօտեցան:





ՍՂ իմ միտքըս ապշած մընաց ,  
Երբոր քովըս տեսայ կայնած ,  
Մէկ եղնիկ մը ձաղովն հանդերձ ,  
Չուզէր բընաւ թողուլ ըզմեզ :  
Չի կենդանիս այս վայրենի ,  
Միշտ մարդկանցմէ հեռու փախչի .  
Երբ մանաւանդ ունենայ ձաղ ,  
Կը ծածկըւի ժայռերու տակ :  
Իսկ այս որպէս ընտանի կով ,  
Կ' ուզէ որ միշտ կենայ մեր քով .  
Եւ երբ որդւոյս լացը տեսնայ ,  
Կը սառկի որ իրեն կաթ տայ :  
Որչափ որ մենք կեցանք ան տեղ ,  
Կեցաւ նա ալ մեր հետ մէկտեղ .  
Թէ և երթար արծրելուն ,  
Դառնար առանց ուշանալուն :  
Մտտաւին մէջ երբ քալէի ,  
Տեսայ պրտղի ծառեր վայրի .  
Թէ և չըլան այնչափ յարգի ,  
Ինձ շատ էին փոխան հացի :  
Մէկ քարայր մ' ալ դըտայ մօտ տեղ ,  
Մեզ սառկելու չէր այնչափ նեղ .  
Որուն քովէն կ' ելլէր աղբիւր ,  
Եւ քաղցրահամ ունէր նա ջուր :

Ասոնք ամենն ինձ երկրնքէն,  
 Մեծ պարգևներ ես կը սեպեմ.  
 Չի որ յուսայ 'ի տէր Աստուած,  
 Հընար չէ որ մընայ քաղցած:  
 Իրաւ սիրտըս մեծ ցաւ կը զգար,  
 Եղած բաներ էրք միտքըս դար.  
 Այլ ինտոււմը ցաւիս յաղթէր,  
 Երբ յիշէի երկնից փառքեր:  
 Ազատեցայ սուտ աշխարհէս,  
 Գանգատ չունիմ ալ ցաւերէս.  
 Թող խեղճ մարմինս հոս տանջուի,  
 Որ հոն անմահ հոգիս հանգչի:  
 Ի՛նչպէս օրհնեմ ըզքեղ Յիսուս,  
 Դու իմ առջին և վերջին յոյս.  
 Այս պարգևիդ եմ անարժան,  
 Ձրի շնորհովդ ըրիր արժան:  
 Քաղցր սիրովդ վառեցիր զիս,  
 Մուցուցիր ինձ սէր աշխարհիս.  
 Թէ և մարմինս այրէ հուր բոց,  
 Մնմահ հոգիս մընայ անխոց:  
 Բաղդիս անիւ դարձաւ յանկարծ,  
 Գլըրեց զիս ճրգեց բարձանց.  
 Նախատինք եմ ամեն մարդկանց,  
 Ես քու սիրովդ եմ ըզմայլած:

Նոր էրք ճանցայ իմ հոգւոյս յարդ,  
 Փակած էր աչքս աշխարհիս փառք.  
 Բորբոքեցիր սիրողդ կըրակ,  
 Որչափ սիրեմ՝ միշտ եմ անյազ:  
 Մէր աշխարհիս ցեց ոսկերաց,  
 Որչափ սիրեմ միշտ վերջն է լաց.  
 Մէր Յիսուսիս անըսպառ կեանք,  
 Վախճան սիրոյս քեզ և ինձ փառք:  
 Մէր մարդկային սէր խաբեբայ,  
 Չէ չէ բընաւ սէր աներկբայ.  
 Իսկ Յիսուսիդ սէր անարատ,  
 Մէր անփոփոխ և միշտ հաստատ:  
 Սիրոյն ազնիւ արդեօք ի՛նչ կայ,  
 Ամեն բարեաց աղբիւր է նա.  
 Այլ և չարեաց կ'ըլլայ պատճառ,  
 Եթէ սիրոյն վախճանն է չար:  
 Չի և սիրոյն կայ չափ սահման,  
 Չափն է ունել բարի վախճան.  
 Սահմանն՝ սիրել վասն Աստուծոյ  
 Եւ չխիրուիլ առանց փորձոյ:  
 Մարդիկ ո՛չ միշտ սիրեն ճրրի,  
 Ետտ հեղ շիտակն տանին ծուռի.  
 Կը դարձընեն չարի բարին,  
 Եւ ցանկութեան հըրով կայրին:

Դու Աստուած իմ զիս փրկեցիր,  
 Զբրով շորհացդ զայն շիջուցիր.  
 Չէի արժան աս պարգևիդ,  
 Երնորհ ունիմ փրկիող ձեռինդ:  
 Զի կրկնակի սէր ցրցուցիր,  
 Զիս 'ի վըշտաց ազատեցիր.  
 Հոս չունիմ վախ ոչ Գողոմէն,  
 Ոչ անիրաւ բամբասանքէն:  
 Բիւր գոհուածիւն քեզ տէր Յիսուս,  
 Դու մըխիթար հոգւոյս մարմնոյս.  
 Դու պահեցիր զիս 'ի մեղաց,  
 Ազատելով 'ի փորձանաց:  
 Թէ չի հասնէր քոյ գթութիւնդ,  
 Կ'ընկերդմէի 'ի խոր անդունդ.  
 Այլ զօրութեամբ յաղթող բազկիդ,  
 Տըւիր ինձ զայս նաւահանգիստ:  
 Այսուհետեւ չունիմ գանդատ,  
 Ալ չեմ սեպեր ես զիս անբաղդ.  
 Թէ մընացի ես հոս մինակ,  
 Իբր անընկեր ու խեղճ տատրակ:  
 Ա՛հ թէ որչափ քաղցր է ինձի,  
 Առանձնական կեանք ցանկալի.  
 Զի ցորչափ կեամ ես միայնակ,  
 Այնչափ ճաննամ իմ հոգւոյս յարդ:

Այս ցանկալի միայնութիւն  
 Ինձ միշտ հաճոյ էր և սիրուն.  
 Չէի ուզեր աշխարհք մտնալ,  
 Փրկիչիդ սիրոյն հեռի ըլլալ:  
 Այլ զի գաղանիք քոյ խորհրդոց  
 Իրաւցընէ խորք ես խորոց,  
 Իմ մանկութեան սէրս մերժեցիր,  
 Հիմայ քու սէրդ արծարծեցիր:  
 Մէկ ատեն մ'ալ զաւկի համար,  
 Միշտ կուլայի ես անդադար.  
 Արդ գըթացիր՝ չեմ անպարտող,  
 Չորցած ծառէն ելաւ ընձիւդ:  
 Թէ և մարմնով աստ մէնք տանջիմք,  
 Այլ ըստ հոգւոյ եմք երջանիկք.  
 Զի ճշմարիտ երջանկութիւն՝  
 Խրղձմըտանաց հանգստութիւն:  
 Մարդուս հոգին մարդով շահուի,  
 Բայց շատ հեղ ալ կը կորսուի.  
 Ուստի լաւ է ապրիլ մինակ,  
 Քան թէ մատնիլ դըժոխքին բանտ:  
 Հապա Տէր իմ, Տէր բարեգութ,  
 Ա՛ռ ընդունէ զայս իմ՝ սոր ուխտ.  
 Զի որչափ և տաս դու ինձ կեանք,  
 Բառնամ զիմ խաչ լըջնութեամբ»:

Տարին սահէր չկտեմ ինչպէս,  
 Օրերն անցնին ջրերու պէս.  
 Յաւ տրտմութիւն չիտեսայ ես,  
 Արցունք չելաւ բընաւ աչքէս:  
 Ան ինչ ինտուս եղաւ սրբտիս  
 Երբոր տեսայ խօսի որդիս.  
 Կահաղելով քաղցրը խօսքեր,  
 Կը բրժըչկէր սրբտիս վէրքեր:  
 Վէց տարեկան երբոր եղաւ  
 Իւր կատարեալ չափը գըտաւ.  
 Գեղեցկութիւն պայծառ դէմքին՝  
 Կարծես լոյս տայր մութ անտառին:  
 Եղնիկն առջի օրէն 'ի վէր  
 Ամենեւին մեզ չէր մոռցեր.  
 Բայց նա իրեք օրը շաբթուն,  
 Ծով կը պահէր մինչ իրիկուն:  
 Ատոր նըման ուրիշ բաներ  
 Իրեն համար կարգ էր դըրեր.  
 Ուրբաթ գիշեր մինչ առաւօտ,  
 Ծընկան վրայ կ'ընէր աղօթք:  
 Շատ հեղ քովէս կ'ելլէր կ'երթար,  
 Ինքն ինքիրեն կ'առանձնանար.  
 Փընտրուելու կ'ելլեմ ո՞ւր է,  
 Տեսնեմ չոքեր աղօթք կ'ընէ:

Գետնի վրայ գիր գըրեցի,  
 Գըրել կարդալ սորվեցուցի.  
 Այնուհետև քալած ատեն,  
 Գըրէր կարդար ինքը իրեն:  
 Յիշողութիւնն էր այնչափ բաց  
 Որ մէկէն մէկ սորվէր լըսած.  
 Իմ պատմածներս մըտքէս կ'ելլէր,  
 Ինքը նորէն միտքըս ձըգէր:  
 Սուրբ գիրքն եղած պատմութիւններ,  
 Բոլոր միտքը պահած գիտէր.  
 Նըմանապէս սրբոց վարքեր  
 Իրենց տօնին օրեր պատմէր:  
 Անչափ տարի կեցանք մինակ,  
 Այլ մեզ բընաւ չէր այն տանջանք.  
 Մանաւանդ թէ եմք յոյժ ուրախ,  
 Անտառն եղաւ մեզի դըրախտ:  
 Իրաւ մարդուս է բընական  
 Սիրել ըզկեանս ընկերական.  
 Սակայն 'ի սպառ կը դառնանայ՝  
 Անկեղծութիւնն երբոր վերնայ:



Թ

Եօթը տարի այն տեղ կեցանք,  
 Փառք Աստուծոյ, մարդ չիտեսանք.  
 Բայց միշտ որդիս կը փափաքէր  
 Թէ ճար ըլլար մարդ մը տեսնէր:  
 Տեսնեմ օր մը առաւօտանց  
 Եղնիկներովն ելաւ գընաց.  
 Շատ չէր անցած վազեց եկաւ,  
 Լալով գըրկիս վըրայ ինկաւ:  
 Շունչը կըտրած երբ դողդըղար՝  
 Կարծես սիրտը տեղէն կ'երթար.  
 Գըրկիս մէջը կը պահուըտի,  
 Լեղապատառ ետին նայի:  
 Ես ալ դարձայ նայիմ ինչ կայ,  
 Տեսայ եղնիկն վազէ կուգայ.  
 Եւ կարծելով թէ եղնիկէն  
 Տըզան այնպէս կուլայ վախէն,

« Որդեակ, ըսի, ինչո՞ւ վախցար,  
 Քեզ եղնիկէն ինչ վընաս կար.  
 Կըտրի՞ճ եղիւր եւ ոտք կայնէ,  
 Սիրտդ ուրախ զըւարթ բըռնէ »:  
 « Վախըս, կ'ըսէ, եղնիկէն չէ,  
 Խեղճն ո՞վ գիտէ ինչ կը քաշէ.  
 Մշուշտ ինկաւ թշնամուցն ձեռք,  
 Որ թէ մեռնի՞ ինձ կ'ըլլայ վէրք »:  
 « Ինչո՞ւ մեռնի ահա հոս է,  
 Զադը հետը կը վազվզէ.  
 Գու փուճ տեղը սիրտդ դող հանես,  
 Դարձիր նայէ, ինչէ՞ն վախես »:  
 « Ո՛հ մայր, ըսաւ, ինչ կը զրուցես,  
 Ինչ վախ քաշելը միթէ գիտես.  
 Այնպէս զարմանք բան մը տեսայ  
 Որ ինչ եղածս ես չիգիտայ:  
 Եղնիկ ըսեմ չէր նըմանէր,  
 Մարդու նըման ձեռքեր ունէր.  
 Փայլուն բան մը ձեռքն էր բըռնած,  
 Զորս ոտքերու վըրայ կայնած:  
 Երկու գըլուխ տեսայ վըրան,  
 Աչուըններէն բոցեր կ'ելլան.  
 Տեսքն ահաւոր մտքս որ կ'իյնի,  
 Մարմինս վըրաս փըշաքաղի:



Եղնիկն ինձմէ առաջ տեսաւ,  
 Մէկէն թողուց քովէս փախաւ.  
 Բայց նա այնպէս վազեց կատղած,  
 Որ անտառը ձայնէն թընդաց » :  
 Տըղան խօսքը չէր լըմընցած,  
 Ես ալ ձայն մը առի մօտանց.  
 Դարձայ ետիս տեսնեմ ինչ է,  
 Փախչիմ ըսեմ կարելի չէ :  
 Չիաւոր մը զինուորական,  
 Ելէր կուգար զէնքեր վըրան.  
 Ես ալ վախցայ չափէն եւել,  
 Սըրտէս կարծեոս արիւն կ'անցնէր :  
 Բայց մայրական գուլթը յորդեց  
 Բողբոյլին վախը մերժեց.  
 Չի կանանց վախն է բընական,  
 Այլ յաղթող է սէր մայրական :  
 Այնպէս ինձի կուգար ներսէս  
 Թէ առիւծ մը դարձեր եմ ես.  
 Կարծեոս կրրակ կայ սըրտիս մէջ,  
 Իր ծուխն և մուխ կ'ելլէ բերնէս :  
 Տըղան գիրկըս առի կեցայ,  
 Յանձնեցի զիս Աստուածածնայ.  
 « Որդի, կ'ըսեմ, ինչո՞ւ վախցար,  
 Մարդ տեսնելու դու չէս բաղձար :



Չի ու վըայ հեծած է նա,  
 Դու մի վախնար, բան մը չիկայ.  
 Երբոր մարդիկ ձի կը հեծնան.  
 Այսպէս ահեղ միշտ կ'երևնան » :  
 Աս խօսքերըս ըսած ատենս,  
 Մնթիւ բաներ կ'անցնէր մըտքէս.  
 Կ'ուզեմ խելքովս սիրտ տալ տղուն,  
 Բայց իմ ներսէս կ'երթար արիւն :  
 Չուզեմ կենալ մարդուն դիմաց,  
 Վըրաս գլուխս է պատըռտած.  
 Ուստի թողի մէկդի փախայ,  
 Թուփի մ'ետեւ պահուրտեցայ :  
 Անթիւն այնպէս շփոթեց զիս,  
 Որ կ'ամաչեմ նայիլ չորս դիս.  
 Ահ, կ'ըսէի, բացուեր գետին,  
 Կուլ տար մէկէն զիս աս կիտին :  
 Այնպէս տագնապ չեմ տեսած ես,  
 Մահուան քըրտինք վազէր մարմնէս.  
 Մարդն ալ տեսնեմ իջաւ ձիէն,  
 « Ինչո՞ւ, կ'ըսէր, փախչիս ինձմէն » :  
 « Խնդրեմ, ըսի, հեռու կեցիր,  
 Սիրտըս բոլոր դող հանեցիր.  
 Ուսկից արդեօք դու հոս եկար՝  
 Տըղաս եղաւ լեղապատառ » :



Կը զարմանայ մարդը վերայ,  
 « Ինչու, ըսաւ, ինձմէ վախնաս.  
 Ձեզի ինձմէ չիկայ վրնաս,  
 Ըսէ ինձի ի՞նչ կամենաս:  
 Երկու հոգի ի՞նչպէս կըրցար,  
 Այսպէս գէշ տեղ կենալ մինակ.  
 Ձեզմէ ուրիշ ունիք ընկեր,  
 Ի՞նչ պատճառաւ հոս էք եկեր »:  
 « Պարոն, ըսի, չունիք ընկեր,  
 Աստուած միայն է մեզի տէր.  
 Ետտ տարի է որ հոս եկանք  
 Ինքը պահեց մեզ անվտանգ »:  
 Կրկին հարցուց. « Ո՞ւր էր ձեր տեղ,  
 Աշխարհ բոլոր ձեզնի էր նեղ.  
 Ինձ կ'երևնայ թէ էք անմեղ,  
 Ձէք փափաքիր երթալ ձեր գեղ »:  
 « Այս էր, ըսի, Աստուծոյ կամք  
 Որ մարդկանցմէ հեռու ըլլանք.  
 Լաւ է ունել հոս թշուառ կեանք,  
 Քան դժոխոց իյնիլ յատակ »:  
 Տեսաւ մարդը որ ետ քաշուիմ  
 Մերկ եղածիս համար մաշիմ,  
 Ետ քաշուեցաւ անդին գընաց,  
 Խօսէր աչքերն իրեն ժողված:

Բայց մընացի ես զարմացած  
 Երբոր որդիս տեսայ յանկարծ՝  
 Գընաց մարդուն գիրիը նըստաւ,  
 Վրզէն ընկաւ պըլլուեցաւ:  
 Ո՛րչափ անգութ մարդ ալ ըլլայ  
 Կարելի չէ լացը չիգայ.  
 Մնտառի մէջ մեծցած տըղայ,  
 Օտար մարդու այնչափ սէր տայ:  
 Մարդն որ ըսես ապուշ մընաց,  
 Խելքը կարծես գըլխէն գընաց.  
 Բան չիմանար կը զարմանայ,  
 « Անշուշտ կ'ըսէ հոս բան մը կայ »:  
 Միթէ նոր եմ տըղայ տեսեր,  
 Ձեմ'ես այնչափ տըղայասէր.  
 Բորբոքեցաւ արդ սըրտիս սէր  
 Կարելի չէ ալ զիս բըռնել:  
 Արդեօք երանջ ես կը տեսնեմ,  
 Այլ բուն չեղած յայտնի գիտեմ:  
 Ո՛վ Աստուած իմ, արդեօք ո՞ւր եմ,  
 Այսպիսի սէր ես տեսած չեմ »:  
 Իսկ տըղուն սէր՝ սըրտին գորով  
 Կարելի չէ պատմել բերնով.  
 Տարածելով փափուկ թևեր,  
 Մարդուն վիզը կը փաթթըւէր:

Հառաչելով մարդը կանչեց,  
 « Մերըդ իմ սիրտս յափրշտակեց ».  
 Դողդըղալով գրրկեց պազաւ,  
 Մէյ մ'ալ գրրկէն վար չիզբրաւ :  
 Մարդը դարձաւ ինծի կ'ըսէ,  
 « Աղաչանքիս խընդրեմ լըսէ .  
 Պէտք չէ բընաւ քաշուիս ինձմէ ,  
 Աս տեղերըս գիտես իմն է :  
 Ինչ որ ուզէք կուտամ ձեզի  
 Միայն ո՞վ էք ըսէք ինծի .  
 Մարդ կարող չէ նեղել ըզձեզ ,  
 Եւ կամ բըռնի հանել ձեռքէս :  
 Ո՞վ հոս ըզձեզ բերաւ ճըգեց ,  
 Կամ գեղերնէդ ո՞վ հալածեց .  
 Ես կարող եմ զիրենք պատժել  
 Եւ տուններնիդ ձեզ դարձընել :  
 Ահա զԱստուած վըկայ կուցեմ  
 Որ ձեր կեանքը միշտ պաշտպանեմ .  
 Գիտնամ աշխարհք է ձեզի դէմ ,  
 Այլեն ուժովս դառնամ ընդդէմ » :  
 Տեսայ մարդը խիստ կ'այլայլէր  
 Աս խօսքերը երբոր կ'ըսէր .  
 Վախցայ ընդդէմ բան մը չըսեմ ,  
 Նորէն գըլխուս փորձանք բերեմ :

« Տէր իմ, ըսի, զիս մի փորձեր ,  
 Այդպէս բաներ ես չեմ գիտեր .  
 Մարդու հետ ալ կենալ չուզեմ ,  
 Այն պատճառաւ հոս եկեր եմ :  
 Թէ որ երկինք տէր կայ գիտես ,  
 Մեր եղած տեղ թող տուր ըզմեզ .  
 Դու քու գործիդ անցիր գընա ,  
 Բայց կ'աղաչեմ մարդ չիմանայ :  
 Մենք աղօթող կ'ըլլանք քեզի  
 Որչափ Աստուած կեանք տայ մեզի .  
 Զըլլայ մէյ մ'ալ գաս դու աս տեղ ,  
 Վասն զի մենք կերթանք մեր դեղ » :  
 Տեսնեմ մարդը խօսքը փոխեց ,  
 « Մի՛թէ տըղայ դու զիս կարծես .  
 Ինչու սերըս կ'արհամարհես ,  
 Ո՞վ եղածըդ պէտք է ըսես :  
 Գիտցիր Աստուած զիս հոս խըրկեց '   
 Պէտք չէ ինձմէ դու բան ծածկես .  
 Ես եղնիկը զարնել եկայ  
 Բայց ձեր գըթով զարնըւեցայ :  
 Աստուծոյ դէմ կը մեղանչես  
 Ո՞վ եղածըդ թէ որ չըսես .  
 Երբոր իմ աս հողիս մէջն ես ,  
 Գիտցիր ինծի հըպատակ ես » :



Երբոր մարդը կ'ըսէր աս խօսք  
 Նորոգէին սըրտիս հին խոցք.  
 Չիյտեմ ինչո՞ւ աչքերս մըթնէր  
 Կը ծալլուէր ծունկիս բարձեր:

« Խնդրեմ, ըսի, ներէ տէր իմ,  
 Հըրաման տուր քիչ մը նըստիմ:  
 Չեմ գիմանար սըրտիս դողին,  
 Մարմնոյս ջըղեր կը շըղճըղին:

Պէտք է իրաւ քեզի պատմեմ  
 Ամենեկին բան չիպահեմ:  
 Բայց վախնամ թէ մեծ ցաւ կը զգաք,  
 Ո՛վ եղածըս եթէ գիտնաք »:

Այսպէս բերնիս եկաւ ըսի,  
 Բայց զարմանամ ինքըս ինծի.  
 Չեմ ալ գիտեր ինչ կը զուրցեմ,  
 Քար կը զարնեմ, բայց որո՞ն գէմ:

Կարծես սըսիրտ քար է կըտրեր,  
 Ու լալ կ'ուզեմ՝ արցունք չելեր.  
 Ներս գիս կըրակ ընկաւ կ'այրի  
 Ո՛հ, չեմ գիտեր ինչո՞վ մարի:

Մէյ մ'ալ յանկարծ պողթկաց բերնէս  
 Մէկ հըրաբուխ լերան մը պէս՝  
 Այնչափ տարուան հընցած ցաւեր,  
 Որոնք սըրտիս մէջ դիզուած էր:

Կ'ուզեմ լեզուս բռնել չըսել  
 Բայց չեմ կըրնար ես զիս զըսպել:  
 Վերջապէս կիրքս յաղթեց կամքիս  
 Ըսի ինչ որ եկաւ բերնիս:

« Լըսէ՛, տէր իմ, ոչ թէ ինծի՛  
 Ճըշմարտութեան որ կը խօսի.  
 Գեհովափէ է իմ անուն,  
 Ձիս կը տանջէ բաղդիս անուն:

Կեանքիս մէջը չիխընտացի,  
 Ծընողացմէ որք մնացի.  
 Այս սուտ աշխարհ միշտ զիս ատեց,  
 Վասն զի կամքս նախ զինքն ատեց:  
 Ոչ աշխարհքէս ես համառի,  
 Եւ ոչ իրեն սէրըս տըլի,  
 Միշտ եղաւ նա ինձ թըշնամի,  
 Իմ սիրտս ալ միշտ իրմէն գանի:

Փետով միայն խընտացի ես,  
 Նա ալ վերջը խեցաւ բաղդէս.  
 Սպիրիտինն էր իւր անուն  
 Եւ սիրելի ամեն մէկուն:  
 Իրեն նըման խոհեմ արդար  
 Կըրնամ ըսել մարդ մը չիկար.  
 Բայց սխալմունքն աս բանիս մէջ  
 Իրեն ամեն բարիք ծածկեց:

Յանկարծ այնպէս դէշ խաբուեցաւ

Որ իւր խաբուիին ալ չիմացաւ .

Իր սրբտին մէջ ըզգաց մեծ ցաւ ,

Այլ անօգուտ՝ չըզգաստացաւ :

Մարդուս ամօթ չէ սրխալիլ ,

Կենաց ճամբուն մէջը գրթիլ :

Այլ մեծ ամօթ չըզգաստանալ՝

Ազգեցութեանց հոգւոյն չանսալ :

Մէկն որ խելքով լաւ փընտրուէ

Գէշն աղէկէն շուտով կ'ընտրէ .

Ճըշմարտութիւնն չիժածկըւիր ,

Բաւական է դու մի ծրուիր :

Փեսայս ունէր մէկ ծառայ մը ,

Գողոն կ'ըսուէր իւր անունը .

Չունէր սիրտը Աստուծմէ ահ ,

Մարդէ ամօթն համարէր խաղ :

Քանի անգամ որ զիս տեսներ

Իւր չար աչքերն միշտ վըրաս էր .

Կ'ամաչէի էրկանս յայտնել

Սրբտին մէջը կասկած ձրգել :

Այնչափ լիբբ էր անըզգամը ,

Որ չէր քաշուէր յայտնել կամբը .

Բայց միշտ ծածկէր զիւր չարութիւն

Յուցընելով անկեղծութիւն :

Այն պատճառաւ կարծէր շատ մարդ

Թէ Գողոն է այր անարատ .

Եւ իբրև հայր հասարակաց

Կը պատուէին զինքն անկասկած :

Աս բանս շատ հեղ կը պատահի ,

Եւ շատ վընաս անկից ծագի .

Մի հաւատար տունդ օտարի ,

Եւ մի պատճառ լինիր չարի :

Թէ որ փեսայս խելքը ըլլար ,

Աս փորձանքներ գըլխուս չէր դար .

Գողոնի պէս չար ծառային

Պէտք չէր հաւտալ ամեն խօսքին :

Երբ գընաց նա պատերազմի ,

Գըրտէն կարծէր իւր թըշնամին ,

Չիյտէր խեղճը որ ընտանի՝

Տան մէջ իմ հետս պատերազմի :

Աւանց ինծի հարցընելու

Գըրաւ տանը վերակացու .

Նա ալ ինքիր խելքին հաւնած ,

Ինչ որ ուղեց գըլխուս խաղաց :

Իւր չար կամքին երբ դէմ կեցայ

Գըլխուս ամեն գալիբ գիտցայ .

Չի գութ բընաւ չիկար սիրտը ,

Ատելութեան դարձուց սէրը :

Երբ մեռած է մէկու մը խիղճ՝  
 Բոլոր մեղքերն դործէ անխիղճ.  
 Ա. յսպէս մարդէն դու միշտ վախցիր,  
 Որչափ կըրնաս հեռու կեցիր:  
 Ես գիտէի հեռու կենալ  
 Թէ որ տէրը մատնիչ չըլլար.  
 Անգիտութեամբ նա զիս մատնեց,  
 Ա. յլ սա անգութ դառն տանջեց:  
 Գընաց փեսիս ամբաստանեց,  
 Իր մըրովը զիս մըրոտեց.  
 Որդւոյս համար կը զրպարտէր,  
 Հարազատ չէ կ'ըսէ եղեր:  
 Աս պատճառիս համար ահա  
 Մահուան վճիռ ես ընկալայ.  
 Ա. յլ դահիճներ մեզ գըթացին,  
 Հոս ձգելով թողին գացին:  
 Ա. յսպէս ուրեմն Սպիրիտին՝  
 Որ կ'երևնար արդար ըզգօն,  
 Յամեն բարեաց անմասն ելաւ  
 Եւ իւր չարեաց պատճառ եղաւ:  
 Նախ զի պէտք չէր այնչափ հաւտալ  
 Եւ օտարին ձեռք զիս թող տալ.  
 Երկրորդ արդար չէր դատաստան,  
 Երբ պատժեց զիս առանց հարցման:

Ա. յլ իմ մեղքերս զիս պատժեցին,  
 Իմ դահիճներ յանցանք չունին.  
 Ես չուզէի աշխարհ մըտնել,  
 Ուխտս ոտքի տակ պէտք չէր առնել:  
 Ասոր համար ամեն փորձանք  
 Եկաւ գըլխուս մինչև հիմակ.  
 Բայց ո՛վ որ չար ուղեց ինծի,  
 Աստուած անոնց տայ թող բարի »:  
 Մարդն որ ըսած խօսքերս լսէր,  
 Արցունքներով գետին թըրջէր.  
 Աչքերն աչքերս դիտէր անթարթ,  
 Եւ մորմնէր սիրտն անընդհատ:  
 Երբոր տեսայ ոտքըս կ'իյնայ,  
 Զարմանալով ետ քաշուեցայ.  
 Գետնին վրայ ընկած, կ'ըսէ,  
 « Ով Տիկին իմ, դու ինձ ներէ:  
 Չար Գողոմն էր որ զիս խաբեց,  
 Նա զիս խեցուց գըլխէ հանեց.  
 Բայց ինձ պէտք չէր անոր հաւտալ,  
 Ա. յսպէս անգութ պատուէր մը տալ »:  
 Խեղճ ընելով երբ նա կուլար,  
 Կըտոր կըտոր իմ սիրտ կ'ըլլար.  
 » Փու՛ճ տեղ, ըսի, ի՛նչ լաս վըրաս,  
 Երբ օգնել ինձ չես ձեռնըհաս:

Թող ամեն մարդ իր վերան լայ,  
 Որ մեղքերէն արդարանայ.  
 Ե՛լ ոտք կայնէ բաւական է,  
 Իմ սրբտիս ցաւ ինծի կ'օգտէ » :  
 « Ես եմ, կանչեց, Սպիրիտինն,  
 Մոլորեցուց զիս չար Գողոն.  
 Ո՛հ ես աս մեղքն ի՛նչպէս քաւեմ,  
 Ի՞նչ երեսով դէմըդ ելլեմ » : —  
 « Սպիրիտինն դու ես իմ տէր,  
 Չեմ հաւատար, մի՛ զիս խաբեր.  
 Ո՛վ Աստուած իմ, ի՛նչ կը լսեմ,  
 Արդեօք ՚ի քուն երա՞զ տեսնեմ » :  
 Մէկէն ինքզինքս ես կորուսի,  
 Չկտեմ մէյմ՝ ալ երբ աչք բացի.  
 Տեսնեմ նա ալ իրար անցած,  
 Զուր է բերեր լընու վըրաս :  
 Եւ երբ քիչ մը ես զիս գըտայ,  
 Իմացայ որ տըղաս կուլայ.  
 Արե՛ գիրկըս որ չլավսնայ,  
 Վազեց ինկաւ հօրը վըրայ :  
 Նա ալ թուեր բացաւ գըրկեց,  
 Հայրական գուժ սիրտը ճըմից.  
 Շոյէր երեսն ու կը պագնէր  
 Եւ գրկախառն սիրով մայլէր :

Ա. յւ ես կ'ապշիմ տըղուն վըայ  
 Արդեօք ի՛նչ բան ներսէն կը գգայ.  
 Հօրը գըրկէն չուզեր ելլել  
 Եւ կամ աչքէն հեռացընել :  
 Մէյմը կուգար զիս կը գըրկէր  
 Արցունքներով ձեռքըս սըրբէր.  
 Մէյմ՝ ալ հօրը վըրայ կ'երթար,  
 Կը պըլլուէր վիզը կ'իցնար :  
 Ա. յսպէս զարմանք բաներ կ'ընէ,  
 Որ տեսնողներ լաց կը շարժէ.  
 Եւ որպէս թէ միջնորդ կ'ըլլայ  
 Որ իր սիրով մեր սիրան որսայ :  
 Բայց իմ սիրտըս չկտեմ ինչու  
 Պաղ կը շարժի զինք սիրելու.  
 Կ'ուրախանամ ողջ տեսածիս,  
 Բայց չէր անցներ հին ցաւ սըրտիս :  
 Ա. յսպէս ահա ատելու թիւն  
 Խոչընդոտան է սըրտի մարդուն.  
 Ա. յւ ուր մընաց սէր իմ փըրկչես,  
 Երբ չեմ ներեր ես ընկերիս :  
 Կ'ըսեմ, Աստուած թող իմ մեղքիս,  
 Ես չեմ հաներ նենգը սըրտիս.  
 Ի՞նչպէս ուրեմն ըսեմ թող ինձ,  
 Երբ չեմ թողուր պարտապանիս :

ԱՏա այսպէս մարդիկ կարծեն,  
 Թէ շնորհքով միշտ լըցուած են.  
 Բայց ան ատեն յայտնին գաղտնիք  
 Երբոր նորէն խրուովին կիրք:  
 Ուստի այսպէս փորձէ դու քեզ  
 Եթէ արդեօք զԱստուած սիրես.  
 Աչքիդ առջին բեր թըշնամիդ,  
 Տես թէ աղօթք կ'ընես հանգիստ:  
 Թէ որ միտքդ կը շփօթի,  
 Պէտք չէ ուրիշ վրկայ քեզի.  
 Գիտցիր որ դու ոչ թէ զԱստուած,  
 Այլ միշտ քու չար կամքդ ես պաշտած:  
 Այս բաները վայրկենի մէջ,  
 Անցաւ մըտքէս՝ սիրտս թափանցեց.  
 « Ա՛հ, ես ուրեմն այսչափ տարի,  
 Ինքիր կամքին ծառայեցի »:  
 Այն ժամանակն ոտքի ելայ.  
 « Լալով, ըսի, գօշեմ մեղայ,  
 Իրաւ անպարտ եմ ան մեղքէն,  
 Բայց շատ անգամ քեզ դատեր եմ »:  
 Բըռնեց ձեռքէս լալով կ'ըսէր,  
 « Գենովափէ, այս քոյ նոր սէր  
 Կը փարատէ սըրտիս ցաւեր.  
 Օրհնեալ ես դու Աստուած իմ Տէր,

Չեմ արժանի այս պարգևիդ,  
 Շնորհ ունիմ պարգևողիդ.  
 Եւ զի Աստուած ես ողորմած,  
 Քու գըթութեամբդ ներէ մեղացս:  
 Գենովափէ, սիրելի իմ,  
 Գիտեմ առջևդ երես չունիմ:  
 Բարեխօս լեր առ փրկիչն իմ  
 Որ մեղքերուս պատիժ քաւուին:  
 Դարձիր նորէն տունըդ շէնցուր,  
 Սխալմունքներս ինծի ցրցուր.  
 Այսուհետեւ առանց քեզի,  
 Բան մը չընեմ ինքքս ինծի »:  
 « Խընդրեմ, ըսի, մի տանիր զիս,  
 Չուզեմ երթալ տեղ մը ասկից.  
 Ո՛հ, իմացայ դրժուար է ինձ,  
 Աշխարհիս մէջ շահիլ հոգիս »:  
 Երբոր աս խօսք ես կ'ըսէի,  
 Սըրտիս մէջը նենգ չունէի.  
 Բայց նա չուզելս կարծէր նենգով,  
 Ուստի նորէն խնդրէր լալով:  
 Այլ իմ սիրտըս նորա լացին  
 Չէր մեղմանար ամենեին.  
 Երբ մանաւանդ կ'ըսէր երթանք,  
 Կարծես գըլխուս փրէկը աշխարք:

« Երկու սուրի մէջ մընացի,  
 Ո՛ր դին դառնամ՝ սիրտը խոցուի.  
 Չերթամ կ'ըսեմ՝ քեզ կը գըլթամ,  
 Եթէ երթամ՝ հոգիս խըղձամ:

Անկողութեան իմ այս վիճակ  
 Ի՞նչպէս թողում ինչնամ վըտանդ.  
 Լաւ է մեռնիմ, զիս հոս թաղէ,  
 Զի մեղանչել ինձ յոյժ դառն է:  
 Զըշմարտութեամբ կ'ըսեմ՝ քեզի,  
 Գաննելի է աշխարհք ինձի.  
 Այնչափ զըզուեր եմ մարդկանցմէ  
 Որ կը գանիմ ինքս ալ ինձմէ:  
 Քաշած ցաւերս ինչպէս մոռնամ,  
 Աշխարհիս ծոօն նորէն ինչնամ.  
 Բան չիմընաց գըլխուս բերին,  
 Ի՞նչպէս հաւտամ մարդկանց խօսքին »:  
 « Ատ խօսքդ, ըսաւ, մ'ըսեր ինձի,  
 Գիտեմ սիրտդդ շատ ցաւցուցի.  
 Այլ ինչ որ ես քեզի ըրի,  
 Նոյն պատիժով զիս պատժեցի:  
 Երբոր ձեզմէ բաժնըւեցայ,  
 Հարցուր մէյմը ես ինչ եղայ.  
 Զարնըւեցայ սըրտէս խորունկ,  
 Գաղբում չունէր աչքէս արցունք:

Այնպէս խիղճըս զիս կը տանջէր,  
 Որդան մը պէս սիրտըս կըրծէր.  
 Վասն անօրէն այս իմ մեղաց,  
 Յոյսըս ինձմէ էի կըտրած:  
 Տեղ մը նըստիլ չէի կըրնար,  
 Մեղքըս մէկէն առջիս կուգար.  
 Ուստի ահա անկից 'ի վեր  
 Այսօր տընէս դուրս եմ ելեր:  
 Այնչափ լացի մոլթ տեղ փակուած  
 Որ աչքերուս լոյսը գընաց.  
 Բայց վերջապէս գըլթաց Աստուած,  
 Ողորմութեան դուռն ինձ եբաց:  
 Դու մի կարծեր թէ իմ կամաւ,  
 Կամ դիպուածը զիս հոս բերաւ.  
 Աստուած ներքուստ սիրտըս շարժեց  
 Չեղ հոս գըսնել ինք յաջողեց:  
 Եւ երբ Աստուած ցըցուց իւր գուլթ,  
 Դու կարո՞ղ ես տանջել անգուլթ.  
 Նա հըրաշքով ձեզ ինձ յայտնեց,  
 Կըրնաս ինքըդ ծածկիլ աչքէս:  
 Այսչափ տարի նըստայ փակուած,  
 Օր մը հոս գալ սիրտս չէր ուղած.  
 Ուսկից միտքըս ինկաւ յանկարծ,  
 Սակայն սիրտըս շարժեց Աստուած:

Ասկից 'ի զատ խօսք մը չունիմ  
 Մի թողուր զիս, սիրելիդ իմ:  
 Թէ տուն դառնայդ չուզեր Աստուած  
 Կարող է ձեզ ծածկել յաչաց »:

Ըսաւ լուեց, նրստաւ տրտում,  
 Աչքէն արցունք չունի դադրում:  
 Հառաչանքներ թըռչին բերնէն,  
 Նետի նրման սիրտըս խոցէն:

Ծատ դէմ կեցայ աղաչեցի,  
 Ոտքը ինկայ թող զիս ըսի.  
 Այլ անօգուտ ինչ ալ բսեմ  
 Պէտք է երթամ ուզեմ չուզեմ:

Ուստի մէկէն ինկայ գետին,  
 Նըւիրեցի կամքս արարչին,  
 « Կամք քո, ըսի, օրհնեալ լիցի,  
 Որպէս յերկինս և 'ի յերկրի »:

Ելայ անկից առի որդիս,  
 Չինայեցայ մէյմ'ալ չոր դիս.  
 Առջևն ինկայ կ'երթամ անձայն,  
 Եղնիկներն ալ հետըս կուգան:

Այնպէս մտքովս վերացեր եմ,  
 Կոխած տեղըս ես ալ չլսեմ:  
 Մէկ անգամ մը դարձայ ետիս,  
 Չեմ հաւատար ինքիւր աչքիս:

Քուն չեղածըս յայտնի գիտեմ,  
 Որ ըսեմ թէ երազ տեսնեմ:  
 Հոս հոն աչքերս կը քայքայեմ,  
 Հեռու ծառերն մարդ կը կարծեմ:

Ո՛ւր որ վազեմ փուճը կ'ելլամ,  
 Ո՛ւր որ երթամ պարապ դառնամ:  
 Մարդը չիկայ, որոնն հոգն է,  
 Որդուցս չըլլան մէջքըս կտորէ:

Արիւն բըրտինք թաթխըրեցայ,  
 Ամեն կողմէն անբաղդ եղայ.  
 Որդիս մարդն է առեր փախեր,  
 Իմ վազվազելս անօգուտ էր:

Մըխիթարանքս միայն նա էր,  
 Անով ամեն ցաւ փարատէր.  
 Թէ որ նա ալ ելաւ ձեռքէս,  
 Անշուշտ խեղքէս բաժնըւիմ ես:

Խօսքըս բերանս էր դեռ կիսատ,  
 Գիտցայ փուճ տեղ կ'ընեմ գանգատ.  
 Մէկէն դարձայ ըսի մեղայ,  
 Յիսուս սուրբ կամքդ օրհնեալ ըլլայ:

Ո՛հ վայ ինձի ամեն անգամ  
 Որչափ ջանամ որ մեղք չկնամ,  
 Հընար չիկայ կը սըխալիմ,  
 Գոնէ մտքովս կը շաղախուիմ:

Աս քանի մէկ ես խօսք կուտամ  
 Որ ալ մեղաց մէջ չիմանամ,  
 Ի՞նչ է պատճառն, ինչո՞ւ կ'իյնիմ,  
 Զրլայ որ ես ինձ վըստահիմ:  
 Որովհետեւ կարելի չէ  
 Որ մարդս իրմով անձին յաղթէ,  
 Թէ որ շնորհքով ես չամրանամ,  
 Ամեն յոյսէս դատարկ կ'ելլամ:  
 Ուստի Տէր իմ, Տէր բարերար,  
 Անօգնական զիս թող մի տար.  
 Խաչող բառնալ միշտ եմ յօժար,  
 Խեղճ բընութեանս դու խընամ տար:  
 Ամեն մէկ բան եկաւ գըլխուս,  
 Բայց դեռ չէի ՚ի սպառ անյոյս.  
 Զաւկիս սէրն որ միտքըս իյնար,  
 Ամեն ցաւերս սըրտէս կ'ելլար:  
 Հիմայ ան ալ առիւր ձեռքէս,  
 Որ մերկանամ ամեն յոյսէս.  
 Ասկից եւեւ չըլլար մեծ ցաւ,  
 Ինձի համար աշխարհք անցաւ:  
 Այլ հնազանդ է կամբըս կամացդ,  
 Մի բաժներ զիս ՚ի քոյ շնորհացդ.  
 Այտուհետեւ դու ես իմ յոյս,  
 Զի մընացի ՚ի սպառ անյոյս:

Ահա Տէր իմ, քուկդ է հոգիս,  
 Զարչարէ զիս ինչպէս կամիս.  
 Զի դու զով որ շատ կը սիրես,  
 Սիրոյդ նըշան դառն տանջես:  
 Ասոնց նըման ուրիշ խօսքեր,  
 Դադրում չունէր լեզուս խօսէր.  
 Սըրտէս չելաւ որդուոյս կորուստ,  
 Այլ խընդուութիւն ունիմ ներքուստ:  
 Քիչ ատենէն վերջը յանկարծ,  
 Զայն մը առի քովէս մօտանց.  
 Դարձայ տեսնեմ ինչ ձայն եղածն,  
 Նորէն սիրաբըս տեղէն թընդաց:  
 Զիւսուորներ էլեր կու գան,  
 Ու կը փայլը զէնքերն վըրան.  
 « Այս է, ըսի, վերջին վայրկեան,  
 Զիս մեռցընել ահա եկան:  
 Սպիրիտին խըրկեց զիրենք,  
 Սըրտին մէջէն չէ ելած նենգ.  
 Պէտք չէր ինձի խօսքին հաւտալ,  
 Ո՞վ եղածնիս իմացում տալ:  
 Վասն զի նա երբոր լըսեց,  
 Երեսին գոյն մէկէն նետեց.  
 Գութ չունենալն երբ գիտէի  
 Պէտք չէր իրեն հաւատայի:



Անշուշտ տարաւ որդիս մեռուց,

Եւ աչքերուս լոյսը կորուց .

Այլ երանի տամ քեզ որդեակ,

Սնանց փառաց եղար ժառանգ :

Թող ցամաքի աչքիս արցունք

Չողբամ բընաւ մահուանըդ սուգ .

Ձի որդեակ իմ դու ոչ մեռար

Այլ ընդ հրեշտակըս դասեցար » :

Աս խօսքերով միտքս էր մայլած ,

Մէյմ'ալ որդիս տեսայ յանկարծ .

« Մայր իմ, կ'ըսէ , քալէ երթանք ,

Ինչո՞ւ կեցար դու հոս մինակ » :

Ես կարծելով տեսիլք տեսայ

Որդիս յերկնիցն եկեր ձայն տայ ,

Պըլլուեցայ վիզէն 'ի վար ,

« Որդեակ, ըսի , զիս հետըդ տար » :

Կրկնեց որդիս . « Ի՞նչ կ'ըսես մայր ,

Ի՞նչպէս կրնամ քեզ հոս թող տալ .

Ահա հայրըս կանչեց մարդիկ ,

Կ'ըսէ երթանք ուշ մընացինք » :

Տեանեմ տրղուն խօսքն էր իրաւ ,

Սպիրիտինն քովըս եկաւ .

Բըռնեց ձեռքէս , կ'ըսէր . « Երթանք ,

Իմ մարդիկս են , չըլլայ վախնաք » :

Աս խօսքն անոր համար կ'ըսէր ,

Կարծեօք վախցածս իմացեր էր .

Ես ամօթէս բան մ'ալ չըսի ,

Գիտցայ զուր տեղ զինքն դատեցի :

Փ.

Ուշ էր ատենն, Ճամբայ ելանք,  
 Գիշեր մութուն քաղաք հասանք.  
 Բայց ինձի մեծ եկաւ զարմանք  
 Երբ պալատին դռունէն մըտանք:  
 Ուր որ ջահեր կը վառուէին  
 Տեսայ բոլոր մըթնած էին.  
 Տունն ու տեղը սուղ էր պատած  
 Ամենուն աչքն արցունք լըցուած.  
 Իրաւ իմ սիրտս ալ լեցուեցաւ  
 Բայց Յիսուսէս նոր ոյժ եկաւ.  
 Ըսի ինչո՞ւ կեցեր կուլամ,  
 Ա՛յսպէս պիտի խօսքէս դառնամ:  
 Ո՛վ Աստուած իմ, ուխտըս ուխտ է,  
 Աչքէս արցունք պիտի չելէ.  
 Ըսի բանան դուռը մատրան  
 Եւ Աստուծոյ գոհուլ թիւն տան:

Դեռ աղօթքնիս չէր լմնացած  
 Կարծեմ քաղաք մարդ չիմնաց,  
 Ամենքն եկեր հոն են ժողվեր՝  
 Կարելի չէ մեզ դուրս ելլել:  
 Մեզ որ տեսան բացին Ճամբայ,  
 Մըտայ տունըս լաթեր հադայ,  
 Ինչ որ ձեռքովս էի պահած,  
 Գըտայ ամբողջ, մարդ չէր դըպած:  
 Բոլոր գիշեր մինչև ՚ի լոյս  
 Չէին դադրեր գալ աչքի լոյս.  
 Երբ զիս տեսնէն կը զարմանան,  
 Զարմանք կ'ըսէն, ու փառք կուտան:  
 Բոլոր տըներ և պալատներ  
 Հաղարաւոր մնմեն վառեր,  
 Լուսաւորուած պայծառ փայլէն,  
 Յորեկուան պէս լուսաւորեն:  
 Իսկ բերդերէն թնդանօթներ  
 Ուրախութեան հընչէն ձայներ.  
 Շատ մարդ քունէն մէկէն զարթած  
 Լեղապատառ դուրս է ցատրած.  
 Յանկարծ այսպէս ուրախութիւն  
 Զարմանք բերաւ ամեն մէկուն.  
 Թէ ամեն բան տեղով պատմեմ,  
 Վախնամ ատենս փուճ կ'անցընեմ:

Իշխանները երբոր տեսայ՝  
 Գողոն մէկէն միտքս կ'իկնայ .  
 « Յանցանքն, ըսի, թող չկիշուի,  
 Միայն չուզեմ որ հոս գրտուի » :  
 Քովի մարդիկ տեսնեմ խընտան՝  
 Զարմանալով խօսքիս վերան .  
 « Գրտաւ, կ'ըսեն, նա իւր պատիժ,  
 Անմեղներուն անգութ դահիճ » :  
 Մէկէն ցաւը սրբախ զարկաւ,  
 Որ չըլլայ թէ հոգին կորաւ .  
 « Սպիրիտին տէր իմ, ըսի,  
 Խնդրեմ Գողոն թող չիմեռնի » :  
 « Շատ չէ, կ'ըսէ, զինք խրրկեցի,  
 Որ մեղքերը շուտով քաւուի .  
 Զորս ձիերու պոչ կապուեցաւ  
 Քարուտ տեղուանք քաշկրտուեցաւ :  
 Թող քայքայուի բոլոր մարմին  
 Այնպէս անգութ անօրինին .  
 Զարին ոսկերք չարաւ ցրուին,  
 Չեն արժանի գերեզմանին » :  
 Իրաւ սրբախ եղաւ մեծ ցաւ  
 Ինչո՞ւ հոգին կորսուեցաւ .  
 Բայց ինչ ըսեմ երբ չիկայ ճար,  
 Իւր կորստեան ինքն է պատճառ :

Աւանդ, ախոս այն շընորհքին,  
 Զոր ըստացար յաւազանին .  
 Կորուսեր զայն խաբամամբ չարին,  
 Մընայ քեզ հուր յաւիտենին :  
 Այլ ինչ, միթէ կայ չափ սահման  
 Աստուածային ողորմութեան .  
 Կարելի է 'ի կէտ մահուան  
 Տըւաւ իրեն շընորհք զըզմանն :  
 Քաղաքացոյ խընտուամն ըսես,  
 Տօն կատարեն մեծահանդէս .  
 Ուրախութեամբ սրբաւոր լեցուաւ,  
 Սուգ տըրտումութիւն մէկէն վերցաւ :  
 Ամիսներով չըսեմ տարուով  
 Յընծութիւն էր բոլոր քաղքով .  
 Մինչև հեռու աշխարհքներէն  
 Գան մեծամեծք որ մեզ տեսնեն :  
 Մեծ իշխաններ ընտանիքով  
 Շատերն եկան մեծ փափաքով .  
 Չեկողներն ալ պարզեւներով  
 Ուրախակից եղան սիրով :  
 Ամեն մէկ բան պատմել կուտան,  
 Ինչ որ գըլխէս եկան անցան .  
 Կ'ուզեն նաև գըրով թողու՞մ  
 Մեզմէ վերջն ալ եկողներուն :

Բայց ես առաջ քան զամեն բան  
 Պէտք է խորհիմ հողոյս վերան.  
 Որ չըլլայ թէ այնչափ տարուան  
 Աշխատանքներս փուռը երթան:  
 Երբոր նորէն եկայ քաղաք,  
 Պէտք է քաշեմ նոր աշխատանք.  
 Գիշեր ցորեկ ըլլայ իմ ջանք,  
 Որ ժամանակս չանցնի դատարկ:  
 Օր մը նրստեր էի մինակ,  
 Մըտած էի իմ անցեալ կեանք.  
 Մըրտիս բաղձանք մ'եկաւ երթալ,  
 Բընակուածեանս տեղը տեսնալ:  
 Մեծ բազմութեամբ ելանք գացինք,  
 Քանի մը օր հոն մընացինք.  
 Այսպէս աղուոր սրբաբաց տեղ էր  
 Որ չէն ուզեր թողուլ ելլել:  
 Իմ ալ սիրտըս շարժեց Աստուած  
 Որ փոխարէն իւր այս բարեաց՝  
 Շինել տամ հոն փառաւոր վանք,  
 Ամենօրհնեալ կուսին պարծանք:  
 Ամեն մէկ բան պատրաստեցինք,  
 Շուտով շէնքը առաջ տարինք.  
 Արովհետեւ շատ վարպետներ  
 Ամեն երկրէ հոն բերուած էր:

Երբ լամբնցաւ եկեղեցին,  
 Մեծ հանդիսով զայն օծեցին.  
 Բոլոր քաղաքն հոն էր ժողված,  
 Ուրախութիւն կ'օրհնէն զԱստուած:  
 Վանքին մէջն բընակիչներ  
 Են սրբակաց ճրգնաւորներ.  
 Որոնց բարի օրինակը,  
 Ըբանչացուց բոլոր ազգը:  
 Եկող գացող միշտ պակաս չէ  
 Ուխտաւորներ ամեն երկրէ.  
 Ես ալ շատ օր հոն կը կենամ,  
 Եւ մահուանէս վերջն ալ հոս գամ:  
 Այս պատմութիւն էր իմ վարուց՝  
 Որ ցանկայիր լսել վաղուց.  
 Ըլլայ քեզ այս սիրոյս ընծայ,  
 Որ կարդալով սիրտըդ ցընծայ:



ԺԱ.

Մարդուս կեանքն է փորձութեան մէջ  
 Ծընած օրէն մինչև 'ի վերջ.  
 Եթէ աղքատ եթէ հարուստ,  
 Չըլլար խաչէ տալ մեզ փախուստ:  
 Գիտցիր մարդիկ միշտ ծուռ դատեն,  
 Խաչ չունեցողն արդար կարծեն.  
 Բայց ճշմարիտ արդար է նա  
 Որ խաչն առեր սիրով կ'երթայ:  
 Մեղաւորն ալ ունի միշտ խաչ,  
 Բայց վերջ չունի տրտունջն ու լաց.  
 Իսկ բարեպաշտն որչափ տանջի,  
 Այնչափ սըրտին սէրը կ'աճի:  
 Ուստի իրօք նա է արդար  
 Որ իւր խաչին չի տփուհար.  
 Թէ և մարմինն հըրով այրես  
 Նա փառք կուտայ ծիծաղերես:

Բայց ոչ երբէք արդար է նա  
 Որ տանի խաչն միշտ ահամայ.  
 Մարդէ եկած կարծեց իւր ցաւ,  
 Ուստի հանգիստ մը չունեցաւ:  
 Ով որ սիրտը նախանձ ունի  
 Նա դիւաց հետ դաշինք ունի.  
 Եւ որ դիւին է դաչնակից  
 Քըրիստոսի չէ մասնակից:  
 Նա միայն է խաչէ ազատ  
 Ով իւր խաչէն չունի դանդաւտ.  
 Եւ նա յաւէտ բարեբաղդիկ,  
 Ով որ խաչը տանի հեզիկ:  
 Թէ Քրիստոսի ես աշակերտ,  
 Չանա քալել միշտ իրեն հետ.  
 Երբ նա խաչով անցուց իւր կեանք,  
 Պէտք է խաչով ըլլանք ժառանգ:  
 Թէ որ Աստուած իւր միածնին  
 Չի խնայեց մատնեց խաչին.  
 Խաչ որ չունիս դու մի կարծեր՝  
 Սըրբոց փառքին ըլլալ ընկեր:  
 Թէ Աստուծմէ խաչդ համարիս,  
 Անշուշտ սիրով զայն կը տանիս.  
 Իսկ երբ մարդէ եկած կարծես,  
 Կարելի չէ որ համբերես:

Անոր համար չես գրտներ մարդ  
 Բոլորովին խաչէ ազատ .  
 Բայց նոյն խաչը ոմանց պարծանք,  
 Նոյն և այլոց է խիստ տանջանք :  
 Ուստի հարկաւ մի և նոյն խաչ,  
 Կ'ըլլայ ոմանց առիթ կենաց .  
 Նոյնպէս ոմանց պատճառ մեղաց,  
 Շատն ալ անյոյս կորաւ գրնաց :  
 Այլ ճըշմարիտ քրքիստոնեայն  
 Պահէ փրկչին միշտ պատուիրան .  
 Գիշեր ցորեկ իւր փոյթն և ջան,  
 Քրքիստոսի ըլլալ նրման :  
 Մարդուս բաղձանք միշտ է անյագ,  
 Ունեցածով էրբ գոհ չըլլանք .  
 Բայց երբ հանգիստ է խրղձմրտանք,  
 Բարի վարքով յադի բաղձանք :  
 Ձի երբ տիրէ մարդ իւր անձին,  
 Յայնժամ բաղձանք լցեալ հանգչին .  
 Եւ նա միայն տէր է անձին,  
 Որ կը յաղթէ կրրից սըրտին :  
 Եւ ճըշմարիտ յաղթող կրրից,  
 Հընազանդ է նա ամենից .  
 Ի՛նչ որ ընէ կը մրտածէ,  
 Թէ է բարի՝ ՚ի գործ դընէ :

Անմշտութեամբ դու մի գործեր  
 Ծերոց խօսքեր մ'արհամարհեր .  
 Ինչ որ չկտես հարցուր սորվէ,  
 Եւ մի ըսեր՝ Ան ալ ո՞վ է :  
 Ինքնահաւան մարդուն սիրտը  
 Միշտ անհանգիստ կ'ընէ զինքը .  
 Իր ըրածէն ինքն է անգոհ,  
 Թէ և դըրսանց ցուցնէ գոհ :  
 Խոնարհ մարդուն սիրտն է խաղաղ,  
 Աշխարհք փըլչի՝ նա չունի վախ .  
 Իսկ ամբարիշտն ամբարտաւան  
 Ձերկ ՚ի յուսոյ է փրկիւթեան :  
 Սիրէ զամենք եղբայրաբար,  
 Այլ ոչ զամենքն ընտանեբար .  
 Սիրէ այնչափ որբան հարկ է  
 Որ այնչափ սերդ քեզ չանպատուէ :  
 Հընազանդէ ամեն մէկուն,  
 Բայց մի հաւտար քեզ ամենուն .  
 Գործքերուդ մէջ եղիւր արթուն,  
 Մի բանար սիրտդ անփորձ մարդուն :  
 Չափ դիր բերնիդ խօսած ատենդ,  
 Չանա պտուղ քաղէն խօսքիդ .  
 Բան մը չըսես չիմրտածած,  
 Որ չըլլայ թէ վերջն ափսոսաս :

Ինչ որ քեզի չեն հարցըներ

Մէկէն 'ի մէկ մէջ մի մըտներ.

Խեղքող միայն տուր ան բանին

Որուն խընամբ քեզ յանձնեցին:

Բողոր յոյսող դիր դու յԱստուած

Որ փորձութեանց դէմ ուժոյնսս,

Ձի ով իւր յոյն անձէն կըտրէ,

Նա Գրիստոսիւ զինեալ յաղթէ:

Փորձութեանց դէմ արթուն կեցիր,

Մի վստահիր թէ յաղթեցիր.

Ձի նա միայն կըտուի յաղթող,

Որ մինչ 'ի վերջն է համբերող:

Մի ուրիշին գործը քըններ

Եւ մի յանդուգն վճիռ կըտրեր.

Աչքող միայն վըրադ դարձուր,

Քու տխտերուդ արմատ չորցուր:

Գու ամենուն ներէ սիրով

Միշտ գըթութիւն ցուցընելով.

Այլ անաչառ պատժէ ըզքեզ,

Երբ պակսութիւն վըրադ տեսնես:

Լաւ է որ քու կամբող կոտրես

Քան թէ այլոց սիրտը աւրես.

Ձի շատ հեշտ է զինքը ուղղել,

Քան թէ այլոց հըրամայել:

Խաղաղութեամբ կեանք կ'անցընես

Թէ որ հանգիստ դու չիմնդրես.

Եւ ամենէն փառք կը գըտնես,

Թէ քեզ բանի տեղ չիդընես:

Թէ որ դուն քեզ լաւ մը քըննես,

Շատ պակսութիւն վըրադ գըտնես.

Ուստի լաւ է զինքը զըսպել,

Քան թէ այլոց գործը քըննել:

Սէրն սկըսի միշտ իւր անձնէ,

Ուստի դու նախ ըզքեզ սիրէ.

Ինչ բան չուղես որ դու լըսես,

Չըլլայ այլոց համար ըսես:

Սմեն աղէկ քեզի կ'ուղես,

Սղէկ ըլլալ ինչո՞ւ չուղես.

Ուրիշները խըրատելուդ

Նախ փընտրուէ անձիդ օգուտ:

Ինչ որ այսօր կըրնաս ընել՝

Մնահող մ'ըլլար, վաղուան ճըգեր.

Ձի այս օրող որ անցուցիր

Գիտցիր մէյմ'ալ ձեռքող չանցնիր:

Միշտ անուանի մարդիկ եղան

Այս աւուր յարգ որոնք գիտցան.

Թէ ատենիդ չիգիտցար յարգ

Գիտցիր որ դու միշտ ես անարգ:

Նայէ իրօք այնպէս ըլլաս  
 Ինչպէս կ'ուզես որ երևնաս .  
 Ինձ ինչ օգուտ հարուստ սեպուիմ  
 Երբ ուտելու հաց ես չունիմ :  
 Քեզ ինչ օգուտ շատ բան տեսածդ .  
 Երբ չես ջանար ճանչնալ քու անձդ .  
 Չիկայ քան զայս մեծ գիտութիւն  
 Ճանչնալ մարդուս զիւր պակասութիւն :  
 Եւ որչափ որ դուն քեզ ճանչնաս  
 Այնչափ հոգւով խոնարհ կ'ըլլաս .  
 Խոնարհութիւն զարդ է անձին ,  
 Խոնարհութիւն դուռն երկնային :  
 Սուտ աշխարհիս ամեն բարիք  
 Տրղայական են խաղալիք ,  
 Ո՛չ խընդութեան պէտք է հաւտալ ,  
 Ո՛չ տրտմութեամբ թըմբիլ մընալ :  
 Ուտի չըլլայ սիրտըդ կապէս  
 Երջակութիւնդ հոս է կարծես .  
 Երազի պէս կ'անցնին օրերդ ,  
 Գործքերդ չանցնիր մընան քու հետդ :  
 Մահուան օրըդ միշտ մըտած է ,  
 Այսօր վերջի օրդ է կարծէ .  
 Այնպէս գործքըդ կարգաւորէ  
 Որ մահն ըզքեզ պատրաստ գըրնէ :

Մեռնելու օրդ թէ գիտնայիր  
 Դու մեռնելէն չէր վախնայիր .  
 Չի գիտացեալ մահ ոչ է մահ ,  
 Արդարն մահէն չունենար ահ :  
 Քանզի արդարն ոչ մեռանի ,  
 Այլ քուն ըլլայ յապահովի .  
 Մնչուշտ օր մը նա կը զարթի ,  
 Բայր վայ երբ մարդ հոգւով մեռնի :  
 Մեռցուր քու կամք որ ողջ մընաս ,  
 Ըզգաստ կեցիւր որ քուն չըլլաս .  
 Փոքրիկ չարէն գայ մեծ վընաս ,  
 Փոքրէն մեծը շուտով կ'իջնաս :  
 Կ'ուզես ըլլալ քու անձին տէր ,  
 Մնավխճան բան դու մի գործեր .  
 Վախճան գործոցըդ դիր զԱստուած  
 Որ չըլլայ թէ վերջը զողջաս :  
 Թէ որ Աստուած է թըչնամիդ՝  
 Զուր է օգնել բարեկամիդ .  
 Բայց մի վախնար թչնամիէ ,  
 Երբ կըտրած չես յոյսդ Աստուծմէ :  
 Թէ բարեկամ չէ մարդ անձին ,  
 Այլք բարեկամ միայն գանձին .  
 Վայ է անոր որ ըստըկով  
 Զինքն ընկըմեց աշխարհիս ծով :





Յոյսը բոլոր դիր դու յԱստուած,  
 Թէ նա ըստեղծ ըզքեզ հաւտաս.  
 Յիսուս փրկչին արեան գին էս,  
 Ինչո՞ւ հոգւոյդ յարգը չիտես:  
 Իւր գոյութիւն մէկն որ ճանչնայ  
 Չըլլար ըսել Աստուած չիկայ.  
 Բայց մարդ զինքը ինչպէս ճանչնար  
 Թէ իւր հոգին անմահ չըլլար:  
 Զի մարդ զինքը հոգւով ճանչնայ,  
 Զինք չիճանցող անբան կ'ըլլայ.  
 Կամ անբան եմ պէտք է ըսես,  
 Կամ ըստեղծողդ ճանչնաս պաշտես:  
 Ուստի երբ դու քեզ կը ճանչնաս,  
 Ըստեղծողդ ալ պէտք է ճանչնաս.  
 Հոգի չունիմ չըսես խեղաս,  
 Ըսած սուտէդ դու կ'ամբշնաս:  
 Ի՞նչպէս հոգի չունիմ կ'ըսես,  
 Երբ մարդկութեամբ պարծիլ կ'ուզես.  
 Ի՞նչպէս Աստուած չիկայ կ'ըսես,  
 Երբ որ հոգւով ճանչնաս ըզքեզ:  
 Ուստի հարկ է խոստովանիս,  
 Նախ թէ անմահ հոգի ունիս,  
 Երկրորդ ճանչնաս քոյ արարիչ,  
 Արդարադատ քրննող սրբտից:

Աս բաներըս մէկն որ գիտնայ,  
 Հոգւոյն յարգը լաւ կը ճանչնայ.  
 Եւ թէ մարմնոյն շատ երես տայ,  
 Քիչ ատենէն պիտի զըղջայ:  
 Ապա մարմնիդ չափով սիրէ,  
 Որ անչափ սէրդ քեզ խաղք չընէ.  
 Հոգւոյդ պատիւ լաւ պահպանէ,  
 Չըլլայ մարմնիդ հոգւոյդ տիրէ:  
 Քիչ օրուան է աս սուտ աշխարհք,  
 Դու մի փոխեր անդիլի կեանք.  
 Կամ հոս պէտք է մարմնով տանջինք,  
 Կամ հոն հոգւով մարմնով այրինք:  
 Երկու թւով թըռչի թըռչուն,  
 Օգնական է մէկը մէկուն.  
 Թէ որ պակսի ուժը մէկին,  
 Մէկէն 'ի մէկ կ'իջնայ գետին:  
 Սապէս հոգին ոյժ է մարմնոյն,  
 Եւ մարմինն է գործի հոգւոյն.  
 Թէ միութեամբ արիանան,  
 Մնմահ փառաց կ'արժանանան:  
 Դարձեալ երկու թւով մարդիկ  
 Թըռչին վայլեն երկնից բարեք.  
 Հոգւով ամբիժք և միամիտք  
 Մարմնով մաքուրք և բարեսիրտք:



Դատումն հողւոյդ ըլլայ բարի,  
 Եւ չի հակի մարմինդ չարի.  
 Յայնժամ հողւով տեսնես զԱստուած,  
 Սիրտըդ է միշտ սիրով մայլած:  
 Հոն է սիրտըդ ուր է քու սէրդ,  
 Դու լաւ քրննէ թէ ո՛ւր է սիրտդ.  
 Թէ փուճ բանի կապեցիր սէր,  
 Ուրացեր ես գիտցիր քոյ տէր:  
 Զի Աստուած է միշտ սրբոց տէր,  
 Իրեն համար է ըստեղծեր.  
 Զի թէպէտ և անյազ է սէր  
 Սակայն յագի աստուածասէր:  
 Ուստի մի դու ըզքեզ խաբեր՝  
 Ամեն բանի սիրտըդ կապեր.  
 Բաց Աստուծոյ ինչ ալ սիրես,  
 Զի հանգչիր սիրտդ, միշտ հառաչես:  
 Զի Աստուծոյ սիրոյն նըշան  
 Մնդորրութիւն սրբոց միայն.  
 Խղձմտանքըդ երբ չէ հանգիստ  
 Գիտցիր Աստուած չէ՛ ի սրբոցիդ:  
 Սէրն Աստուծոյ՝ մեզ կ'արծարծէ,  
 Միշտ քաղցրութեամբ ըզմայլած է.  
 Թէ քաղցրութիւն չըզգաս ՚ի քեզ  
 Աստուծոյ հետ միացած չես:



Աստուծոյ հետ կը միանաս,  
 Երբ մէկ է կամբդ անոր կամաց.  
 Ինչ որ խօսիս ինչ որ ընես,  
 Կամքն Աստուծոյ միշտ կը խնդրես:  
 Թէ որ սրբոցիդ խորը մտնաս  
 Եւ քու վերագ միշտ մըտմըտաս,  
 Մէկէն տէրըդ հոն կը գտնաս  
 Մնոյ՛ ձայնոյն զըւարձանաս:  
 Երբ Աստուծոյ հետ միանաս,  
 Քաղցր սիրով կը սքանչանաս.  
 Մարդիկ ինչ ալ խօսին ընեն,  
 Շրփութեւլ քեզ կարող չեն:  
 Զի Յիսուսիդ սէրն յաղթող է՝  
 Սիրտըդ իրեն կը գըրաւէ.  
 Եւ միշտ ներքուստ քեզ կը սփոփէ,  
 Յաւ տըրտմութիւն սրբոցիդ մերժէ:  
 Դու քու կամբդ մի փընտըռեր,  
 Թէ Յիսուսիդ կամբդ ես տըւեր.  
 Քանզի անկէց մեծ սէր չիկայ  
 Երբոր մէկը կամքն ուրանայ:  
 Ի՛նչ ճըգնութիւն կ'ուզես ըրէ,  
 Թէ և մարմինդ կըրակն այրէ.  
 Քանի որ դու կամբդ պաշտես,  
 Միշտ ըստեղծողդ քեզմէ բաժնես:



Վան Աստուծոյ թողուլ զԱստուած,  
 Աս բանս շատին խելք չէ հասած.  
 Միայն գիտէ առաքինին,  
 Որ հընազանդ է իւր մեծին:  
 Ինչ որ իրեն հըրամայեն,  
 Չի երկբայիր կ'ընէ մէկէն.  
 Չի կուրօրէն հընազանդի,  
 Թէ և միտքը չի համոզուի:  
 Նա է միայն կամքն ուրացող՝  
 կամքն Աստուծոյ կամաց յանձնող  
 Ինչ որ մեծին բերնէն լսէ,  
 Աստուծոյ կամքն աս է կ'ըսէ:  
 Իսկ նա որ իւր կամքին լսէ՝  
 Թէ թըռչի երկինքն ելլէ,  
 Մի հաւատար կամնապաշտ է,  
 Աստուծոյ տեղ իր կամք պաշտէ:  
 Յոյց կուտայ թէ սիրէ զԱստուած  
 Որչափ ազատ է փորձանաց.  
 Երբոր ինչայ նեղութեան մէջ,  
 Փանգատանաց չես գըտնէր վերջ:  
 Արդ այս ոչ է ճշմարիտ սէր,  
 Առաքեալն ալ ինչպէս կ'ըսէր.  
 Չի չէ մեծ ինչ՝ ըլլալ զըւարթ՝  
 Երբ շընորհաց ցօղ դայ առատ:

Միշտ ճըշմարիտ աստուածասէրն  
 Յամաբ ատեն բորբոքէ սէրն.  
 Չի չիք քան զայն թանկագին սէր,  
 Որպէս սիրելն երբ ոչ գոյ սէր:  
 Առաքինի մարդու համար՝  
 Ասկից եւեւ մեծ խաչ չըլար,  
 Երբոր տեսնէ սէրը մարած,  
 Եւ արտասուքն աչքէն ցամբած:  
 Որովհետեւ հընար չեկայ  
 Որ մարդուս սիրտ միշտ նոյն մընայ,  
 Աստուածային սիրոյն կըրակ,  
 Մարած կ'ըլլայ շատ ժամանակ:  
 Բայց և այնպէս չեզանգըտիր,  
 Այլ միշտ անձին է մեղադիր.  
 Խոնարհութեամբ կուլայ կ'ողբայ,  
 Մինչև Աստուած նորէն գըթայ:  
 Քիտէ որ յետ ցուրտ ձըմերան  
 Կը յաջորդէ տաքն ամառուան.  
 Քիտէ դարձեալ թէ համբերող  
 Յամենայնի է միշտ յաղթող:  
 Ուստի պէտք է մենք ալ գիտնանք՝  
 Թէ Աստուծոյ հաճոյ կ'ըլլանք  
 Երբ աւելի ենք ցուրտ ցամաք  
 Քան թէ յորժամ սիրով վառեալք:

Նեղութեան մէջ թէ որ չինաս  
 Համբերութիւնդ ինչով գիտնաս .  
 Համբերութիւնդ է փորձաքար ,  
 Թէ որ յուսով արիացար :

Նեղութեան մէջ յիշեմք ըզտէր ,  
 Ի նեղութեան գոչեմք առ տէր .  
 Եւ նեղութեամբ որչափ փորձիմք՝  
 Այնչափ յուսով քաջալերիմք :

Եւ որ յուսով կը համբերէ ,  
 Նա անըսպառ գանձ համբարէ .  
 Զի սուրբ հոգւոյն գանձ շնորհաց ,  
 Իր սրբոն մէջ միշտ է սրփռած :

Կարելի չէ որ մարդ փրկի  
 Թէ նեղութեամբ նախ չիփորձի .  
 Եւ այս նըշան մեր փրկիութեան՝  
 Թէ համբերողք եմք նեղութեան :

Ուստի պէտք է քաջալերուինք  
 Երբ նեղութեամբ կը փորձուինք .  
 Զի կըրակով փորձի ոսկին ,  
 Եւ նեղութեամբ առաքինին :

Մի փրնտուեր գու հանգիստ կեանք ,  
 Կարդա քրննէ Յիսուսի վարք .  
 Համբերելու սորվեցուր քեզ ,  
 Թէ ճշմարիտ աշակերտն էս :

Ի՞նչպէս կըրնաս աշկերտ ըսուիլ  
 Թէ որ իրեն չէս նմարիր .  
 Ինչ որ բանիւ նա քարոզէ ,  
 Ինքը գործով նախ կատարէ :

Եւ երբ զինքը մեք հայր կոչեմք ,  
 Որդիութիւնն գործքով յայտնենք .  
 Նա չիխրտեր չարին բարւոյն ,  
 Արեն անձրև տայ ըստ տեղւոյն :

Մենք ալ պէտք է ըլլանք գըթած  
 Նա և բուն խոյ մեր թըշնամեաց .  
 Թէ քաղցած են՝ կերակրելով ,  
 Թէ մերկ , ծարաւ՝ խընամելով :

Թէ որ ուզեն զըրկել ըզմեզ ,  
 Հարկ է ըլլանք համբերող հեզ .  
 Թէ շապիկնիս քաշեն առնեն ,  
 Բաճկոննիս ալ ձրգենք մէկէն :

Զի Ստուած մեր Յիսուս փրկիչ  
 Ամեն բարեաց ինքն պարգևիչ ,  
 Երբ մերկացաւ յանգութ դահճաց ,  
 Դէմ չիկեցաւ գողով Ստուած :

Մնգութ մարդկանց ձեռք ենք ինկեր ,  
 Ծանրացընեն ուսերնուս բեռ ,  
 Յիշենք մեր տէրն խաչը գըրկեր ,  
 Կերթայ խաչուիլ նա առ տէր մեր :

Աջ երեսիդ զարկին ապտակ,  
 Դու Յիսուսէդ առ օրինակ,  
 Զախ երեսդ ալ դարձուր սիրով,  
 Զի նա ապտակն էառ թըքով:  
**Մարդիկ ըզքեզ նախատեցին**  
 Անպարտ տեղը զըրպարտեցին,  
 Թէ ծառայ ես քեզ փրկողին,  
 Յիշէ իրեն ինչէր ըրին:  
**Քաղքէ քաղաք կը հալածեն,**  
 Եիտակ խօսքդ ալ ծուռ կը մեկնեն,  
 Այլ դու հանդարտ անհոգ եղիր,  
 Առանց տիրոջդ տերև չինկիր:  
**Աղէկու թիւն կ'ընես մարդկանց,**  
 Դէմքդ դէշն է միշտ պատրաստած,  
 Դու մի տրբամիր, թէ ես անվարձ,  
 Յաւիտենից վարձքդ է անանց:  
**Խաղաղութիւն ճրգեմ կըսես,**  
 Քու հանգիստդ ալ կորսնցընես.  
 Այլ դու հանգիստ պէտք չէ ուզես,  
 Երբ Յիսուսիդ աշակերտն ես:  
**Կեդծաւոր ես կ'ըսեն քեզի,**  
 Ինչո՞ւ սիրտդ կը խրոսովի.  
 Խոնարհութեամբ պէտք է ըլլես,  
 Անոգուտ է ինչ ալ ըսես:

**Եկաւ Յիսուս կեանք աշխարհի՝**  
 Հրաշքներն էին անքրնների.  
 Սամարացի անուն դըրին  
 Դիւաց կըցորդ դև է ըսին:  
**Աղքատ հարուստ չես որոշեր,**  
 Հասարակաց ցուցնես սեր.  
 Այլ վերջապէս կը բամբասուիս,  
 Փոխան սիրոյ գրանես չարիս:  
**Ինչո՞ւ տերդ ալ հայր աղքատաց՝**  
 Բամբասուեցաւ ՚ի մեծատանց.  
 Եւ վերջապէս հարուստ աղքատ,  
 Թո՛ղ խաչեսցի վըճուեցին դատ:  
**Թէ Յիսուսի աշակերտն ես**  
 Եւ երբ զԱստուած քեզ հայր կոչես,  
 Վարդապետիդ նրման կ'ըլլաս,  
 Թէ ըսածներս պահել ջանաս:  
**Եւ ես ինչ որ հոս գըրեցի**  
 Գիտցիր անձամբ նախ փորձեցի.  
 Ա՛ռ զէս հանգիստ կեանքդ անցընես,  
 Պէտք է ախտերդ նախ մեռցընես:  
**Եւ որ ցանկայ հոգին շահի՛**  
 Հարկ է կամքէն հըրաժարի:  
 Զի ո՞վ իւր կամքն հոս չուրանար,  
 Նա Աստուծոյ հաճոյ չըլար:

Ծանր էր գրվեստ անցած բաներ ,  
 Եւ դիմանալ անհրնար էր .  
 Բայց երբ տիրոջս կամք միտքս գար ,  
 Հոգիս ներսէս մեծ ոյժ կը զգար :  
 Գիտէի որ Աստուած ինքն է  
 Որ աս բաներս տընօրինէ ,  
 Ուստի և ես ուզեմ չուզեմ ,  
 Պէտք է որ կամքս կամացն յանձնեմ :  
 Բայց երանի տամ ես նրմս  
 Որ կամաւ կամքն Աստուծոյ տայ .  
 Ինք կամք չունի որ կամենայ  
 Միշտ Աստուծոյ կամաց ցանկայ :  
 Ուստի և դու սիւ ընթերցող ,  
 Աս խօսքս ըրէ անկըճիդ օղ :  
 Քեզ Աստուծոյ ձեռքը միշտ թող ,  
 Եւ կիրքերուդ եղիւր յաղթող :  
 Արքայութեան փառքը յիշենք՝  
 Ասով ամեն վիշտ կը դիւրենք .  
 Յիտունս բլրայ մեզ օրինակ՝  
 Անաց կենաց կըլանք ծառանդ :



*իրայ կայ իմ 1-26*

Handwritten text, possibly a signature or name, written in cursive script. The text is oriented vertically and appears to read "Handwritten text".

45

16320

in

2013



